

Մարտ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2020

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2020
N 1 (50)

Գիտական հանդես
Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հանձնված է տպագրության 16.03.2020թ.

Տպագրությունը՝ լագերային-թվային, ֆորմատ A4:

Տպաքանակը՝ 100 օրինակ:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ, խմբագրական խորհուրդի նախագահ:

Srbuhi Galyan – Deputy Minister of Justice of the Republic of Armenia, Chairman of the Editorial Board..

Աշոտ Հայրապետյան – «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր:

Ashot Hayrapetyan – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief editor.

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Artak Asatryan – PhD in Law.

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor.

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor.

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Volodya Hovhannisyanyan – Doctor of Law, Associate Professor.

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Armen Yesayan – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր:

Grigor Badiryan – Doctor of Law.

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor.

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor.

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor.

Ժորա Ջհանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ruben Avagyan – Rector of “Manç” University, Doctor of Law, Professor.

Արփիին Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Arpine Hovhannisyán – PhD in Law, Associate Professor.

Սուրեն Քրմոյան – ՀՀ փոխվարչապետի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու:

Suren Krmoyan – Adviser to Deputy Prime Ministrer, PhD in Law.

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor.

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Գարիկ Քեռյան – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor.

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Mushegh Hovsepyan – Head of Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor.

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոքիզմետի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor.

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

Hayk Kupelyants – PhD in Law.

Ալեքսանդր Կրիմով – Ռուսաստանի Գաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ներքին ծառայության գեներալ-մայոր:

Alexander Krymov - Chief of the Academy of Law Management of the Federal Penitentiary Service of Russia, DSc in Law, Professor, Major General of Internal Service.

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Գաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

Andrey Skiba – Head of Chair of Criminal and Executive Right of Legal Faculty of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, Major of Internal Service.

Եվգենի Բարաշ – Ուկրաինայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:

Ievhen Barash – Head of the Criminal and Penal Service Institute of National Academy of Internal Affairs of Ukraine, Major General of Internal Service, Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine.

Հենրիկ Լինդերբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Social Sciences.

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Sergey Chernyavsky – Vice Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Legal Sciences, Professor.

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right, Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs Doctor of Legal Sciences, Associate Professor of the All-Russian State University of Justice.

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Process of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Legal Sciences, Professor.

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor.

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Aleksandr Rubis – Professor of the Chair of Criminal Process of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Legal Sciences, Professor.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Արմեն Օհանյան (պատասխանատու քարտուղար), Միլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 6 **ԱՌՆՈԼԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքները
- 13 **ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԳՅԱՆ**
Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հարցերը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում
- 22 **ԱՌՆՈԼԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հայեցակարգային հիմունքները
- 30 **ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**
Ինքնության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում սզգային ինքնության ձևափոխման համատեքստում
- 37 **ԱՀԱՐՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ**
Թվային գործիքների ներդրումն անչափահասների արդարադատության ոլորտում
- 43 **ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ**
Կադրային քաղաքականության իրավական կարգավորումը ՀՀ հանրային ծառայության համակարգում

ԱՌՆՈՒԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական
դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Ներկայացված հոդվածում հեղինակը քննարկում է անվտանգության միջոցների պայմանները և հիմքերը, դրանց կիրառման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Հոդվածում տեղ գտած դիտարկումների հիման վրա հեղինակը ներկայացնում է հիմնավորումներ՝ անվտանգության միջոցների կիրառման օրենսդրական կարգավորումները բարեփոխելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հիմնաբառեր- բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, ընտանեկան հսկողություն, բժշկական հսկողություն, հիմնավոր կասկած, հասարակության համար վտանգ:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի (այսուհետ՝ նաև ԲԲՀՄ) հարուցման պահից սկսած, անձի նկատմամբ անվտանգության միջոցներ կիրառելիս, սահմանվում է հսկողություն, իսկ մինչ այդ՝ կիրառված խափանման միջոցը ենթակա է վերացման:

Գործող քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ ՔԴ-Օ) սահմանվում են երկու տեսակի անվտանգության միջոցներ՝ հսկողության համար ազգականներին, խնամակալներին, հոգաբարձուներին հանձնելը (այսուհետ՝ նաև ընտանեկան հսկողություն) և անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը (այսուհետ՝ պայմանականորեն նաև՝ բժշկական հսկողություն): Առաջին հերթին դրանք միմյանցից տարբերվում են անձի նկատմամբ սահմանվող հսկողության իրավական ռեժիմով: Մասնավորապես, ընտանեկան հսկողությունը կապված չէ ազատությունից զրկելու հետ. դատավարական հարկադրանքի միջոց է, որի ընթացքում անձը հսկողության համար հանձնվում է ազգականներին, հոգաբարձուներին, խնամակալներին՝ այդ մասին տեղյակ պահելով առողջապահության մարմիններին: Մինչդեռ, բժշկական հսկողությունն, ազատությունից զրկելու հետ կապված դատավարական հարկադրանքի միջոց է, որի ընթացքում անձը տեղավորվում է բժշկական հաստատությունում: Բացի իրավական ռեժիմից, նշված անվտանգության միջոցներն, ըստ գործող ՔԴ-Օ-ի, տարբերվում են նաև մեկ այլ չափանիշով՝ անձի՝ հասարակության համար ներկայացվող վտանգավորությամբ: Այսպես, ԲԴ-Օ 458-459-րդ հոդվածների համաձայն՝ եթե բժշկական հսկողությունը սահմանվում է հասարակության համար վտանգ ներկայացնող անձի նկատմամբ, ապա ըն-

տանեկան հսկողությունը՝ հասարակության համար վտանգ չներկայացնող անձի նկատմամբ է:

Անվտանգության միջոցների կիրառման պայմաններն ընտանեկան և բժշկական հսկողության դեպքում, ըստ էության, նույնանում են՝ այն ընթացակարգային բնույթի տարբերությամբ, որ ելնելով անձի ազատության իրավունքի սահմանափակման երաշխիքից՝ բժշկական հսկողությունը ենթարկվում է պարտադիր նախնական դատական վերահսկողության:

Անվտանգության միջոցի կիրառման պայմանների շարքում, կարծում ենք, որ առաջնային տեղ է գրավում ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման մասին որոշման առկայությունը: Մասնավորապես, անվտանգության միջոցը կիրառվում է որպես երաշխիք հոգեկան հիվանդությամբ տառապող անձի նկատմամբ, իսկ դրա կիրառման իրավական հնարավորությունը, գործող կարգավորումների պայմաններում, ծագում է ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցմամբ: Ուստի, հատուկ վարույթի հարուցման մասին որոշումը պետք է դիտարկել՝ որպես անվտանգության միջոցների կիրառման պարտադիր պայման:

Եթե ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման մասին որոշումն, ըստ էության, ավելի տեխնիկական բնույթ է կրում, ապա անվտանգության միջոցների կիրառման հաջորդ՝ առանցքային նշանակություն ունեցող պայմանը, կարծում ենք, անձի հոգեկան առողջության վերաբերյալ փորձագիտական եզրակացության առկայությունն է, քանի որ հոգեկան հիվանդությամբ չտառապելու կամ դեպքից հետո առողջանալու վերաբերյալ փորձագիտական եզրակացության պարագայում, անձի նկատմամբ անվտանգության միջոցներ կիրառվել չեն կարող:

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Անվտանգության միջոցներից՝ բժշկական հսկողություն կիրառելիս, դատահոգեբանության կամ դատահոգեբուժության ոլորտում հատուկ գիտելիքներ ունեցող անձի մասնագիտական եզրակացությունն առավել առանձնահատուկ նշանակություն ունի՝ հաշվի առնելով, որ այս շրջանակներում, անձը ֆիզիկական ազատության սահմանափակմամբ, ստացիոնար ձևով տեղավորվում է բժշկական հաստատություն և ենթարկվում հարկադիր բժշկական միջամտության: Սակայն, ինչպես միջազգային իրավական փաստաթղթերը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն՝ անձին բժշկական հաստատությունում տեղավորելիս, որպես հատուկ պայման, առանձնացնում են փորձագիտական եզրակացության առկայությունը: Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձևի 16-րդ սկզբունքի համաձայն՝ անձն իր կամքին հակառակ կարող է ընդունվել բժշկական հաստատություն՝ որպես հիվանդ, կամ պահվել այնտեղ, միայն, եթե օրենքով հոգեկան առողջության ոլորտի լիազորված մասնագետը որոշի, որ այդ անձն ունի հոգեկան հիվանդություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էլ իր հերթին ընդգծում է, որ, թեև հոգեբուժությունը թե՛ բժշկական, թե՛ սոցիալական տեսանկյունից զարգացող ոլորտ է, և «հոգեկան հիվանդ» եզրույթը չունի հստակ սահմանում՝ չի կարելի համարել, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետը թույլ է տալիս անձին կալանքի տակ պահել պարզապես այն պատճառով, որ տվյալ անձի գաղափարները կամ վարքագիծը շեղվում են գերակշռող նորմերից: Այդ պատճառով, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հոգեկան հիվանդ համարվող անձի որևէ կալանք չի կարող համարվել Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածին համապատասխան, եթե դրա մասին որոշումը կայացվել է առանց բժիշկ-փորձագետի կարծիքը հաշվի առնելու՝ համապատասխան օբյեկտիվ բժշկական փորձաքննության միջոցով: Հետևաբար, անվտանգության միջոցների կիրառման հարցը լուծելիս, պետք է փաստել, որ անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու մասին փորձագիտական եզրակացության առկայությունը պարտադիր պայման է:

Անվտանգության միջոցի կիրառման մյուս պայմանը, կարծում ենք, քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունն է, ինչը մեր կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ գործնականում քննարկման առարկա չի դարձվում իրավակիր-

րառողների կողմից: Մինչդեռ, ինչպես անձին փորձաքննության ենթարկելու համար բժշկական հաստատությունում տեղավորելու, այնպես էլ անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո, նրա նկատմամբ անվտանգության միջոց կիրառելու հարցը լուծելիս, դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն նաև քրեական օրենքով՝ արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը: Նշվածն, ըստ էության, արտացոլված է նաև ներկայումս շրջանառության մեջ գտնվող ԲԴՕ նախագծում, որի 140-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական հսկողության նկատմամբ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառվում են կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման համար օրենսգրքով սահմանված կանոնները:

Հարկ է նկատել, որ անվտանգության միջոցի կիրառմամբ, անձին բժշկական հաստատությունում տեղավորելիս, որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման հիմք, ծառայում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի «ե» ենթակետը, որոնք, ի տարբերություն անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմք, չեն ներառում՝ քրեական օրենքով արգելված արարք կատարելու մեջ անձի առնչությունը ստուգելու պահանջը: Սակայն, պետք է ընդգծել, որ ԲԲՀՄ-ի կիրառման ողջ գործընթացը քրեական դատավարությունում ածանցվում է անձի կողմից քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստից: Ուստի, մինչ այդ փաստի վերջնական հաստատումն, անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման համար էական նշանակություն ունի անձի քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատումը: Այդ մոտեցումը բխում է նաև դոկտրինալ աղբյուրներից, որոնց համաձայն՝ անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումը պայմանավորված է իրավախախտում կատարած լինելու հետ: Հետևաբար, եթե բացակայում է իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածը, ուրեմն խոսք գնալ չի կարող դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման մասին: Հարկ է ընդգծել, որ հիմնավոր կասկածի առկայության ստուգումը նաև երաշխիք է՝ անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կամայական կիրառումը բացառելու համար:

Այսինքն՝ ներկայացված պատճառաբանությունների հիման վրա պետք է արձանագրել, որ

անվտանգության միջոցի կիրառման պարտադիր պայմաններից է նաև քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը: Ուստի, բժշկական հսկողությունն անվտանգության միջոցի կիրառման նկատմամբ, նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս դատարաններն այս գործընթացը նաև պետք է պատշաճ գնահատման ենթարկեն նույն կերպ, ինչ՝ կալանքն անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս: Այսինքն՝ տվյալ դեպքում ևս, հիմնավոր կասկածի առկայությունը պետք է հիմնավորվի գործի նյութերում՝ առկա տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, իրենից հետաքրքրություն է ներկայացնում անվտանգության միջոցների կիրառման այլ հնարավոր պայմանների ուսումնասիրությունը: Այսպես, գործող ՔԴՕ 457-459-րդ հոդվածների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանցում օգտագործվող՝ «դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո կիրառվող խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման», «անմեղսունակության փաստը հաստատվելու պահից՝ (անձը) կարող է հանձնվել ազգականների, խնամակալների, հոգաբարձուների հսկողությանը», «անմեղսունակության փաստը հաստատվելու պահից՝ (անձը) կարող է տեղավորվել հոգեբուժական հաստատությունում» ձևակերպումներից տպավորություն է ստեղծվում, թե անձի՝ քրեական օրենքով արգելված արարքն անմեղսունակության վիճակում կատարած հանգամանքն ենթակա է քննության՝ մինչդատական վարույթի ընթացքում անվտանգության միջոցների կիրառման հարցը լուծելիս: Այլ կերպ՝ անմեղսունակության փաստի հաստատումն անվտանգության միջոցի կիրառման պայմաններից է: Մինչդեռ, պետք է արձանագրել, որ անմեղսունակության վիճակում գտնվելու հանգամանքի հաստատման բացառիկ իրավասությունը վերապահված է գործն ըստ էության քննության առնող դատարանին, քանի որ այն գործի դատական քննությանը լուծման ենթակա հարց է՝ համաձայն ՔԴՕ 463-րդ հոդվածի: Հետևաբար, մինչդատական վարույթի ընթացքում անձի անմեղսունակության փաստի հաստատումն անթույլատրելի է՝ հաշվի առնելով, որ անմեղսունակության պարզումն ածանցվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստի հաստատումից, ինչը չի կարող դառնալ քննության առարկա՝ ընթացքի մեջ գտնվող նախաքննության պայմաններում: Հակառակ պարագայում՝ կարող է խախտվել քրեական վարույթի տարբեր փուլերի միջև ձևավորված գործառնության լիակատար կապը:

Նշվածի հիման վրա պետք է արձանագրել, որ օրենսդրի կողմից վերը հիշատակված հոդվածներում օգտագործվող ձևակերպումներն ընդունելի համարվել չեն կարող: Սակայն, մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանց առկայության պայմաններում, իրավակիրառ պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառման միջնորդությունը քննելիս, դատարանների կողմից հաստատվել է անձի անմեղսունակության փաստը: Այսպես, օրինակ՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն «Անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի անմեղսունակության փաստը հաստատելու մասին» վերտառությամբ, 2017 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ՍԳ-3/0003/15/17 որոշման եզրափակիչ մասում արձանագրել է. «(...) Քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարած [Ա.Ա.-ի] անմեղսունակության փաստը հաստատել (...):»:

Միևնույն ժամանակ՝ հարկ է նաև անդրադառնալ ՀՀ ՔԴՕ 457-րդ հոդվածում օգտագործվող՝ «դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո կիրառվող խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման» ձևակերպմանը, որի պարագայում իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ դատարաններն անվտանգության միջոց կիրառելու հետ մեկտեղ՝ նույն որոշմամբ նաև վերացրել են անձի նկատմամբ մինչ այդ կիրառված խափանման միջոցը: Այլ կերպ՝ խափանման միջոցի վերացումը դիտարկել են որպես անվտանգության միջոցի կիրառման պայման և նախնական դատական վերահսկողության շրջանակում լուծման ենթակա հարց: Այսպես, օրինակ՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՇԳ-0045/15/17 որոշման եզրափակիչ մասում նշել է. «(...) որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնել և վերջինիս տեղավորել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն ՓԲԸ», կամ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ՍԳ-3/0003/15/17 որոշման եզրափակիչ մասում նշել է. « (...) ստորագրություն չհեռանալու մասին կիրառված խափանման միջոցը վերացնել և նրա նկատմամբ, որպես անվտանգության միջոց, կիրառել հոգեբուժական հիվանդանոցում տեղավորել:»: Մինչդեռ պետք է փաստել, որ անվտանգության միջոցի կիրառման և մինչ այդ ընտրված խափանման միջոցի վերացման ընթացակարգերն ունեն ինքնավար բնույթ և կիրառված խափանման միջոցի վերացման հարցը դուրս է անվտանգության

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

միջոցի կիրառման նկատմամբ իրականացվող նախնական դատական վերահսկողության սահմաններից: Ուստի, թեև անվտանգության միջոցները չեն կարող կիրառվել խափանման միջոցներից զուգահեռ, սակայն վերջիններիս վերացումը չի կարող դիտարկվել որպես դատարանի կողմից անձի նկատմամբ անվտանգության միջոցի կիրառման պարտադիր պայման:

Անփոփելիվ վերոգրյալը՝ կարծում ենք, որ անվտանգության միջոցների կիրառման պայմանների շարքին են դասվում՝ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հարուցման մասին որոշման, անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքը հավաստող փորձագիտական եզրակացության, ինչպես նաև քրեական օրենքով արգելված արարք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը:

Անվտանգության միջոցների նշանակման հարցը լուծելիս, ՀՀ ԲԳՕ 458-459-րդ հոդվածների համաձայն՝ որպես հիմք է ծառայում անձի՝ հասարակության համար ներկայացվող վտանգավորության գնահատումը: Մինչդեռ, պետք է փաստել, որ նշված չափանիշը որոշակիորեն հակադրության մեջ է գտնվում անձին բժշկական հաստատությունում տեղավորելու համընդհանուր չափանիշի հետ, որի համաձայն՝ անձը բժշկական հաստատությունում կարող է տեղավորվել ոչ միայն հասարակության, այլ նաև իր համար վտանգ ներկայացնելու դեպքում:

Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձևի 16-րդ սկզբունքի համաձայն՝ «Անձն, իր կամքին հակառակ, կարող է ընդունվել բժշկական հաստատություն որպես հիվանդ կամ պահվել այնտեղ, եթե հոգեկան հիվանդության պատճառով առկա է իրեն կամ այլ անձանց անմիջական կամ անխուսափելի ծանր վնաս պատճառելու վտանգ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս նշել է, որ բուժհաստատությունում հոգեկան խանգարում ունեցող անձի տեղավորումը կարող է պահանջվել այն ժամանակ, երբ անհրաժեշտ է հսկել վերջինիս՝ ինքն իրեն կամ այլ անձանց վնասելու վտանգը կանխելու համար»: Ինչպես տեսնում ենք անձին բժշկական հաստատությունում տեղավորելը պայմանավորվում է ոչ միայն այլ անձանց, այլ նաև ինքն իրեն վնաս պատճառելու վտանգի կանխման հետ: Հարկ է նաև նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասով ԲԲՀՄ-ի նշանակումը ևս պայմանավորվում է իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնելու չափանիշի հետ: Հետևաբար, եթե հարուցված վարույթի

արդյունքում անձի նկատմամբ կարող են նշանակվել ԲԲՀՄ, նաև ինքն իրեն վնաս պատճառելու վտանգը կանխելու նպատակով, ապա մինչ այդ՝ գործի նախաքննության կամ դատական քննության ընթացքում, ևս կարող է լինել այդպիսի վտանգ, որը կարող է միայն չեզոքացվել անվտանգության միջոցի կիրառմամբ:

Պետք է նաև նշել, որ ներկայացվածն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանդիպում են դեպքեր, երբ անձը վտանգ չի ներկայացնում հասարակության համար, սակայն վտանգ է ներկայացնում իր անձի համար և ունենում բժշկական հսկողության կարիք: Օրինակ՝ թիվ ԵԳ/0149/15/18 գործով փորձագիտական եզրակացությունների պարզաբանման նպատակով հարցաքննված հոգեբույժ Կ.Ա.-ն իր ցուցմունքում նշել է, որ Բ.Ս.-ն ինքն իր անձի նկատմամբ վտանգավորություն է ներկայացնում, որի մասին են վկայում նրա սուիցիդալ մտքերը, սակայն հասարակության համար վտանգ չի ներկայացնում, վերջինս իր ներկա հոգեկան վիճակով մասնակի է գիտակցում և ղեկավարում իր գործողությունները, քանի որ նրան ուղղված հարցերի մի մասին տալիս է ըստ էության պատասխաններ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ անվտանգության միջոցների կիրառման հիմքում որպես չափանիշ պետք է ընդունվի հոգեկան հիվանդությամբ տառապող անձի ոչ միայն հասարակության, այլ նաև՝ իր համար ներկայացվող վտանգավորությունը:

Նշվածը հանդիսանալով անվտանգության միջոցի կիրառման հիմք՝ խափանման միջոցների կիրառման հիմքերի մասն, ևս կրում է կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում է ապագային վերաբերող իրադարձություններ⁸: Հետևաբար, բժշկական հսկողություն անվտանգության միջոցի կիրառման նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս, դատարանները չեն կարող քննարկել և արձանագրել անձի՝ իր կամ հասարակության համար հաստատապես վտանգ ներկայացնելու հանգամանքը, որն ըստ էության բխում է ՀՀ ԲԳՕ 459-րդ հոդվածի 1-ին մասից: Մեր համոզմամբ նշված հանգամանքը պարզելու բացառիկ իրավասությունը, ինչպես անմեղսունակության փաստի հաստատման դեպքում, վերապահված է գործն ըստ էության քննության առնող դատարանին և հանդիսանում է ոչ թե անվտանգության միջոցի, այլ բուն ԲԲՀՄ-ի կիրառման հիմքը՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի: Ուստի, բժշկական հսկողություն անվտանգության միջոցի նշանակման հարցը

www.ardaratutyunjurnal.com

լուծելու համար՝ դատարանն անձի վտանգավորությունը գնահատելիս չպետք է այն աստիճան խորը ուսումնասիրություն կատարի, որ պահանջվում է ԲԲՀՄ-ի կիրառման հարցը լուծելիս: Հակառակ պարագայում՝ կխախտվի քրեական վարույթի տարբեր փուլերի միջև գոյություն ունեցող գործառության կապը: Մինչդեռ, մեր կողմից կատարված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձին բժշկական հաստատությունում տեղավորելու՝ վարույթն իրականացնող մարմնի որոշման նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս՝ դատարաններն ըստ էության մշտապես արձանագրում են անձի՝ հասարակության համար վտանգ ներկայացնելու փաստը: Այսպես, օրինակ՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԱԲԳ/0022/14/16, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ ԵԿԳ/0099/15/17 և մի շարք այլ որոշումների ուսումնասիրությամբ պարզվեց, որ դատարաններն իրենց որոշումներում արձանագրել են անձի՝ հասարակության համար վտանգ ներկայացնելու փաստը, որպիսի պրակտիկական վերը ներկայացված պատճառաբանությունների հիման վրա, կարծում ենք, ընդունելի համարվել չի կարող:

Մեր համոզմամբ քրեական վարույթի այս փուլում անձի նկատմամբ անվտանգության միջոցի կիրառման հարցը լուծելիս դատարաններն անձի վտանգավորության աստիճանը պետք է քննարկման առարկա դարձնեն հիմնավոր կասկածի մակարդակով՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման հիմնավոր կասկածի առկայության հարցը լուծելու նման: Այսպես, դատարանները պետք է գնահատեն, թե անձի հոգեկան հիվանդության, մեղսագրվող արարքի, ներկայացված ապացույցների, փաստական տվյալների և տեղեկությունների պայմաններում առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ անձը կարող է վտանգ ներկայացնել իր կամ հասարակության համար: Արդյունքում կբացառվի ԲԲՀՄ-ի վարույթի կիրառման, դատական քննության առարկայում ներառված հանգամանքների հաստատումը, քրեական վարույթի ավելի վաղ փուլում՝ գործի նախաքննության ընթացքում:

Միևնույն ժամանակ, վերոնշյալը չի բացառում գործի նախաքննության ընթացքում անձի՝ իր կամ հասարակության համար առերևույթ վտանգ չներկայացնելու հանգամանքի պարզումը, երբ վերջինս հիմնավորվում է անձի վարքագծի, ստացված բժշ-

կական տվյալների, ինչպես նաև փորձագիտական եզրակացության համակցությամբ: Այդ համատեքստում իրենից հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի քննարկումը, թե այդ պարագայում արդյո՞ք ընդունելի է անձի նկատմամբ անվտանգության միջոցի կիրառումը:

Մասնավորապես, գործող օրենսդրության պայմաններում, ինչպես արդեն նշեցինք, ի տարբերություն խափանման միջոցի կիրառման հիմքերի, որոնց բացակայության պարագայում հնարավոր է, որ քրեական գործով անձի նկատմամբ ընդհանրապես խափանման միջոց չկիրառվի՝ ԲԲՀՄ-ի կիրառման գործերով անվտանգության միջոցի չկիրառում հնարավոր չէ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ անվտանգության միջոցներից՝ ընտանեկան հսկողությունը նշանակվում է հասարակության համար վտանգ չներկայացնող, սակայն՝ փորձագետի եզրակացության համաձայն, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ:

Նախևառաջ պետք է արձանագրել, որ ԲԲՀՄ-ի կիրառման գործը դատարան ուղարկելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է ունենա համոզմունք, որ առկա են ԲԲՀՄ-ի կիրառման պայմանները և հիմքերը: Այսպիսով՝ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի հիմնական նպատակը բուժման նշանակումն ապահովելն է, սակայն սկսած այն պահից, երբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի մինչդատական նախապատրաստման ընթացքում պարզվի, որ անձին բուժելը դարձել է առարկայագուրկ՝ համապատասխան պայմանների կամ հիմքերի բացակայության պատճառով, գործը դատարան ուղարկվել չի կարող:

ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի՝ իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնելու հանգամանքը դասվում է ԲԲՀՄ-ի նշանակման հիմքերի շարքին: Այսինքն, եթե բացակայում է անձի՝ իր կամ հասարակության համար վտանգ ներկայացնելու հնարավորությունը, ապա ԲԲՀՄ նշանակվել չի կարող: Նման պայմաններում, պետք է արձանագրենք, որ, եթե գործի նախաքննության ընթացքում՝ մինչև ԲԲՀՄ-ի կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելը, քրեական վարույթն իրականացնող մարմնին հայտնի դառնա, որ անձը վտանգ չի ներկայացնում իր կամ հասարակության համար, ապա այդպիսի միջնորդություն ներկայացնելով գործը դատարան ուղարկելը դառնում է անիմաստ՝ անձի նկատմամբ ԲԲՀՄ նշանակման անհնարինության պատճառով:

Արդյունքում, կարծում ենք, որ ընտանեկան հսկողություն անվտանգության միջոցի կիրառման հիմքը պետք է վերանայել՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ոչ իրավաչափ վարքագծի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դրսևորման վտանգի բացակայության պայմաններում անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումն ընդունելի չէ: Մասնավորապես, դոկտրինալ աղբյուրների համաձայն՝ բոլոր դատավարական հարկադրանքի միջոցներին բնորոշ հատկանիշներից է անձի հնարավոր ոչ իրավաչափ գործողությունների կանխումը՝ ապահովելով նրա պատշաճ վարքագծի դրսևորումը: Այսպես, դատավարական հարկադրանքի միջոցները սահմանվում են որպես պետական ներգործության միջոցներ, որոնք քրեադատավարական եղանակով խափանում են ոչ իրավաչափ գործողությունները (անգործությունը)՝ վտանգ ներկայացնող արդարադատության շահին և առաջադրված խնդիրների լուծմանը¹: Դրանից հետևում է, որ անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոց չի կարող կիրառվել ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման փաստի կամ այդպիսի վտանգի բացակայության պայմաններում: Մինչդեռ, դատավարական հարկադրանքի միջոցների շարքին դասվող ընտանեկան հսկողության դեպքում նշված հատկանիշը բացակայում է, քանի որ այն կիրառվում է անձից բխող հասարակական վտանգի բացակայության պայմաններում:

Վերոնշյալի հիման վրա գտնում ենք, որ ընտանեկան հսկողություն անվտանգության միջոցի կիրառման հիմքը պետք է պայմանավորել ոչ թե անձի՝ իր կամ հասարակության համար վտանգ չներկայացնելու, այլ այդ վտանգի ցածր աստիճանի հետ: Նշված մոտեցման պայմաններում անվտանգության միջոցները միմյանցից կտարբերվեն անձի՝ իր կամ հասարակության համար ներկայացվող վտանգավորության աստիճանով: Ավելին, այդ պարագայում ընտանեկան հսկողությունը կդիտարկվի նաև որպես այլընտրանքային անվտանգ

գութան միջոց, որը կկիրառվի նվազ վտանգավորություն ունեցող անձանց դեպքում: Հակառակ պարագայում, ստացվում է, որ անկախ ունեցած վտանգավորության աստիճանից՝ գործող օրենսդրության պայմաններում հոգեկան հիվանդությամբ տառապող անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն մեկ միջոց՝ բժշկական հաստատությունում նրա ֆիզիկական ազատությունը սահմանափակող բժշկական հսկողությունը, այդպիսի մոտեցումն արդարացված համարել չի կարելի: Այդ կապակցությամբ հարկ է նկատել, որ թեև ՔԴՕ նախագծի՝ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սկզբունքն ամրագրում է, որ բժշկական հաստատությունում հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է այն դեպքում, երբ անձի հնարավոր անօրինական վարքագիծը չի կարող երաշխավորվել հարկադրանքի այլ միջոցներով, սակայն, ինչպես գործող կարգավորումների դեպքում, նախագիծը ևս իր կամ շրջակա միջավայրի համար վտանգ ներկայացնող անձի նկատմամբ կիրառելի է համարում միայն բժշկական հսկողություն անվտանգության միջոցը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ որպես դատավարական հարկադրանքի ինքնուրույն տեսակներ՝ անվտանգության միջոցների կիրառման հիմքերը, պայմանները ենթակա են օրենսդրական հստակ կարգավորման՝ անձի իրավունքների, այդ թվում՝ ազատության իրավունքի պաշտպանության երաշխիքներն ապահովելու և դրա կամայական սահմանափակման հնարավորությունը բացառելու նպատակով:

¹ Գործող օրենսդրական կարգավորումների համաձայն՝ այն չի հետապնդում հիվանդանոցային խնամք կամ բուժում ապահովելու նպատակ:

² Տե՛ս, Rakevich v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 58973/00, կետ 26-րդ:

³ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ruiz Rivera v. Switzerland գործով 2014 թվականի փետրվարի 18-ի վճիռը, գանգատ թիվ 8300/06, կետ 59-րդ, S.R. v. The Netherlands գործով 2012 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը, գանգատ թիվ 13837/07, կետ 31-րդ:

⁴ Տե՛ս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Winterwerp v. The Netherlands գործով 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 6301/73, կետ 39-րդ, Stanev v. Bulgaria գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 145-րդ:

⁵ Տե՛ս, Коврига З.Ф., Уголовно-процессуальное принуждение, Воронеж, изд. Воронежского университета, 1975, стр. 15.

⁶ Տե՛ս, mutatis mutandis Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 21-22-րդ կետերը:

⁷ Տե՛ս, Hutchison Reid v. The United Kingdom գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2003 թվականի փետրվարի 20-ի վճիռը, զանգառ թիվ 50272/99, կետ 98-րդ:

⁸ Տե՛ս, mutatis mutandis, Արամ Ճուղուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

⁹ Տե՛ս, Коврига Э.Ф., Уголовно-процессуальное принуждение, Воронеж, изд. Воронежского университета, 1975, стр. 30.

Օգտագործված գրականության ցանկ

1. Андреевна Р.А., О правовой природе применения мер принуждения к лицу, в отношении которого ведется производство о применении принудительных мер медицинского характера, Вестник восточно-сибирского института МВД России, М., 2019.
2. Буфетова М.Ш., Производство о применении принудительных мер медицинского характера, Иркутск, Российская государственная библиотека, 2004.
3. Трошкин Е.З, Захаров А.С., Досудебное производство по уголовным делам об общественно опасных деяниях невменяемых лиц, М., Юнити, 2010.
4. Ленский А.В., Якимович Ю.К., Производство по применению принудительных мер медицинского характера, М., Юрист, 1999.

Արնոլդ Վարդանյան

Главный специалист службы правовых экспертиз
Кассационного суда Республики Армения.
Аспирант кафедры уголовного судопроизводства
и криминалистики юридического факультета ЕГУ

ՔԵԶԻՍԵ

Правовые гарантии применения мер безопасности

В представленной статье автор обсуждает сущность, условия и основания применения мер безопасности в уголовном судопроизводстве Республики Армения. Исходя из позиций, изложенных в статье, автор обосновывает необходимость реформирования законодательства о применении мер безопасности.

Ключевые слова: принудительная мера медицинского характера, семейное наблюдение, медицинское наблюдение, обоснованное сомнение, опасность для общества.

Arnold Vardanyan

Chief Specialist at the Service of Legal Expertises of the
Court of Cassation of the Republic of Armenia.
PhD Student at the Chair of Criminal Proceedings and
Criminalistics of YSU, Faculty of Law

SUMMARY

Legal safeguards for the use of security measures

In the presented article, the author discusses the nature, conditions and grounds for the application of security measures in the criminal proceedings of the Republic of Armenia. Based on the positions expressed in the article, the author provides justifications for the necessity to reform legislation on the application of security measures.

Key words: compulsory medical measure, family observation, medical observation, reasonable doubt, danger to society.

Բնագիրը ներկայացվել է 09.02.2020թ.

Ընդունվել է տպագրության 10.03.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Դիլբանդյանը

ՄԱՆՈՒԿ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ,
ոստիկանության գնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ
ՀԱՐՅԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

«Սուբյեկտիվ իրավունքի չարաչափան հարցերը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում» հոդվածի երկրորդ մասի հետազոտման առարկան է սուբյեկտիվ իրավունքի չարաչափան արգելքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) նախադեպային իրավունքում: Սակայն, այս դեպքում շեշտադրում է կատարվել ՄԻԵԿ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետով սահմանված անհատական զանգատ ներկայացնելու իրավունքի չարաչափան արգելքի հիմնահարցի վրա:

Հիմնաբառեր – սուբյեկտիվ իրավունք, չարաչափան, ՄԻԵԿ, ՄԻԵԴ, նախադեպային իրավունք:

Սկիզբը «Արդարադատություն» գիտական հանդեսի 2019 թվականի 3 (49) համարում

Անհատական զանգատի գործառույթը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 2015 թվականի «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստի՝ յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

ՄԻԵԿ Արդար դատաքննության իրավունքի և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի՝ «Արդյունավետ բողոքարկման և արդար դատաքննության մատչելիության իրավունք» վերտառությամբ, 6-րդ հոդվածի 1-ին մասը և համապատասխանաբար 47-րդ հոդվածը՝ անձերի համար երաշխավորում են օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից, ողջամիտ ժամկետում, արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքը: Դիտարկվող հիմնական և կոնվենցիոն իրավունքները երաշխավորում են անձերի պաշտպանություն դատարանի միջոցով: ՄԻԵԿ 34-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը կարող է զանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են Կոնվենցիայով կամ նրան կից արձանագրություններով իրենց իրավունքները ճանաչած

որև Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման գոհը: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը, որը, ինչպես նշվեց, ամրագրվել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասում՝ որպես հիմնական իրավունք:

Արդար և օրինական դատարանի իրավունքը ծանրակշիռ տեղ է զբաղեցնում ՄԻԵԿ-ում, ոչ միայն հիմնական իրավունքի տեսակը հաշվի առնելու կոնտեքստում, այլ նաև իրավունքի պաշտպանության համար՝ զանգատների և վերջինիս վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքի ծավալով՝: Ավելին, ՄԻԵԴ-ը, Պերեսն ընդդեմ Ֆրանսիայի գործի շրջանակներում, ընդգծում է, որ նշված իրավունքը ծանրակշիռ դերակատարություն ունի ժողովրդավարական հասարակության մեջ և վերջինիս սահմանափակ մեկնաբանումը որևէ կերպ չի կարող արդարացվել՝:

ՄԻԵԴ անհատական զանգատ ներկայացնելու իրավունքը՝ մարդու իրավունքների վերաբերյալ պաշտպանության գործուն մեխանիզմ է: ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասում արձանագրված է «յուրաքանչյուր ոք» եզրույթը (որն՝ անհատական զանգատ ներկայացնող սուբյեկտ է) որը համահունչ է ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի բովանդակությանը: ՄԻԵԴ-ը, կարևորելով անհատական զանգատի գործառույթը և նպատակը, ընդգծելով զանգատի ձևական նախապայմանները պահպանելու անհրաժեշտությունը, տարբեր առիթներով նաև արձանագրել է, որ պետք է բացառվի ծայրահեղ ձևակերպությունը՝ առաջնային պլան մղելով ՄԻԵԿ-ի նաև զանգատի նպատակի հար-

www.aradaradutyjournal.com

ցը: Գանգատի անհատականությունն ուրվագծվում է ՄԻԵԿ 34-րդ հոդվածի բովանդակությունում, համաձայն որի՝ այն ներկայացնելու իրավունք ունեն ցանկացած ֆիզիկական անձ, ոչ կառավարական կազմակերպություն կամ մասնավոր անձանց խմբեր: Վերջինի դեպքում՝ անկախ խմբային ձևից, խմբի յուրաքանչյուր անդամ գանգատ ներկայացնում է անհատապես իր անունից: Այսպիսով, կարևորվում է կոնկրետ դիմումատուի կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առիթով անհատական գանգատ ներկայացնելը (ratione personae):

Այսպիսով, կոնվենցիոն իմաստով, ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածով սահմանված անհատական գանգատը՝ որևէ Բարձր պայմանավորվող սուբյեկտի կողմից նույն հոդվածով նախատեսված անձերի, կոնվենցիոն իրավունքների խախտման դեպքերում, վերջիններիս պաշտպանության և վերականգնման համար միջազգային մակարդակում դատարան ներկայացվող դիմումն է:

Անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահումը:

(ա) Անհատական գանգատի ընդունելության ընդհանուր չափանիշները: ՄԻԵԿ-ի անհատական գանգատի ընդունելության չափանիշներն, ըստ էության, սահմանված են ՄԻԵԿ 34-րդ և 35-րդ հոդվածների փաստակազմերում: Ժամանակի ընթացքում այդ նորմերի կիրառության վերաբերյալ ձևավորվել է ՄԻԵԿ-ի հսկայական նախադեպային բազա: Նկատենք, որ անհատական գանգատի ընդունելության չափանիշները կարելի է բաժանել՝ *նյութականի* (պատշաճ դիմումատու լինելը ⁷ (ֆիզիկական անձ ⁸, իրավաբանական անձ ⁹, ֆիզիկական անձանց ցանկացած խումբ ⁹), Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով գոհ լինելը (անմիջական գոհ, անուղղակի գոհ, ենթադրվող գոհ) ¹⁰, ակնհայտորեն չհիմնավորված գանգատ չներկայացնելը (առանց ապացույց կամ մտացածրի գանգատները) ¹¹, նշանակալից (էական վնասի առկայությունը) և *ընթացակարգայինի* (իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելը, ներպետական վերջնական որոշումը ընդունելուց հետո, վեց ամսվա ժամկետում, ՄԻԵԿ-ի դիմելը, անանուն գանգատ չներկայացնելը, ՄԻԵԿ-ի կողմից արդեն քննված կամ միջազգային քննության հանձնված կամ գործի առնչությամբ կարգավորման այլ ձևաչափ ընտրված գանգատ չներկայացնելը ¹², գանգատի իրավունքը չչարաշահելը):

Գանգատն ըստ էության քննության ընդունելու գործընթացը՝ պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի: Գանգատի առկայությունը դեռևս բավարար չէ, որպեսզի պատասխանող պետությունը ներգրավվի անհրաժեշտ գործընթացներում: Դատարանը կարող է, մինչև գործն ըստ էության

քննության ընդունելը, սեփական նախաձեռնությամբ դիմումը համարել անընդունելի: Դիմումն ըստ էության քննության ընդունելուց հետո, գանգատի ընդունելության հարցը սկզբունքորեն կարող է դրվել պատասխանող-պետության, նշված հարցի հետ կապված, առարկություններ ներկայացնելու դեպքում: Հատկանշական է, որ, եթե Դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարող է դնել գանգատի ընդունելության հարցը ¹³, ապա պատասխանող կողմի հայեցողությունն, այս հարցում սահմանափակվում է այն հանգամանքով, որ նման միջոցառումները բերվել է ավելի ուշ, քան կարող էր ներկայացվել, այսինքն՝ հնարավոր էր բերել մինչ այդ փուլը ¹⁴:

Անհատական գանգատի ընդունման չափանիշների համակարգում, աշխատանքի հետագոտման առարկայի շրջանակներում, առանձնացվում է՝ **Անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման արգելքի ինստիտուտը**: ՄԻԵԿ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետի համաձայն՝ Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն (.....) հանդիսանում է՝ **գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում**: *Ընդգծվում է, որ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետի իմաստով «չարաշահում» հասկացությունը պետք է ընկալվի իր սովորական նշանակությամբ՝ ընդհանուր իրավական տեսության համաձայն, մասնավորապես՝ որպես իրավունքի, իր ստեղծման նպատակներից տարբերվող, այլ նպատակների համար վնասակար, իրականացում: Այլ կերպ՝ խոսքը անհատական գանգատ ներկայացնելու ձևով սուբյեկտիվ իրավունքի չարաշահման մասին է: Այսինքն՝ իրավունքի այնպիսի իրացում, որը հակասում է այդ իրավունքի նպատակին և խոչընդոտում է Դատարանի պատշաճ գործունեությանը կամ վարույթների պատշաճ իրականացմանը ¹⁵: Նկատենք, որ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետի կիրառության պրակտիկական հուշում է, որ այն հիմնականում կապված է լինում հիմք չունեցող բազմաթիվ գանգատներ ներկայացնելու դեպքերի հետ, նաև ընդգծվում է, որ դրանք, հատկապես, առաջացնում են՝ ՄԻԵԿ-ի չհիմնավորված ծանրաբեռնվածություն ¹⁶:*

(բ) Անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման վերաբերյալ ՄԻԵԿ-ի պրակտիկան: Նկատենք, որ Կոնվենցիան օգտագործում է «անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում» ձևակերպումը, սակայն որոշակիացված չեն չարաշահման դեպքերը: Այս հարցում ծանրակշիռ դերակատարություն ունի ՄԻԵԿ-ի դատական պրակտիկան, ինչն առանձին

www.ardaratutyunjurnal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դեպքերում, կարծում ենք՝ շեղվում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինստիտուտի իրավունքի տեսության մեջ տրված ընդհանուր մոտեցումից: Հատկանշական է, որ գանգատի իրավունքի չարաշահման հարցում պատասխանող պետության փաստարկները և ՄԻԵԴ մոտեցումը պետք է լինեն ծանրակշիռ, հակառակ պարագայում, առկա է դատական պաշտպանության միջազգային *իրավունքի* չարդարացված միջամտություն: ՄԻԵԴ որպես միջազգային դատական պաշտպանության իրավունքի չարաշահում է համարում հետևյալ իրավիճակները.

Դատարանին շփոթմունքի մեջ գցելով, ապակողմնորոշելու նպատակներից ելնելով՝ ակնհայտ կեղծ փաստեր ներկայացնելը: Դատարանը զարգացնելով իր տեսակետը, որպես առավել հաճախ կրկնվող դեպքեր, առանձնացնում է՝ անձերի տվյալները¹⁷, փաստաթղթերը կեղծելը¹⁸:

ՄԻԵԴ արձանագրում է, որ գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահումը կարող է դրսևորվել նաև գանգատը ներկայացնելուց հետո *կոնկրետ գործով նոր ի հայտ եկած փաստերը կամ, առհասարակ, որևէ զարգացում թաքցնելով կամ չներկայացնելով*¹⁹: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ նման իրավիճակները հիմնականում կապված են լինում դիմումատուի օգտին ներպետական որևէ որոշում կայացնելու հետ: Դատարանն այս հարցում քննադատում է դիմումատուի ներկայացուցիչների, նման զարգացումների մասին չիրազեկելու հետ կապված, վարքագիծը: Ընդգծվում է, որ ներկայացուցիչների դիտավորությունը, որպես կանոն, ուղղված է Դատարանին խառնաշփոթի մեջ գցելուն, որը և պետք է հաստատվի բավարար որոշակիությամբ²¹: Նկատենք, որ ներկայացուցիչներին ուղղված նման պահանջները, ըստ էության, իրավական հետևանքներ են առաջացնում դիմումատուի համար: Ներկայացուցչի կողմից ցանկացած անգործություն վերագրվում է դիմումատուին և կարող է հանգեցնել՝ գանգատի իրավունքի չարաշահմամբ բերված լինելու հիմքով նրա գանգատի մերժմանը: Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ի կանոնակարգի 44 C (*Վարույթին արդյունավետ մասնակցելուց խուսափելը*) կանոնի համաձայն՝ «Եթե կողմերից որևէ մեկը Դատարանի պահանջով չի ներկայացնում ապացույց կամ տեղեկատվություն, կամ անձնական դրդապատճառներով թաքցնում է համապատասխան տեղեկատվությունը, կամ այլ կերպ խուսափում է գործով վարույթին արդյունավետ մասնակցելուց, ապա Դատարանը նման վարքագիծը կարող է գնահատել իր հայեցողությամբ (ինչպես հարմար է գտնում):»²²: Ինչպես երևում է նորմի փաստակազմից, առաջին հերթին կողմերի վրա դրվում են Դատարանի կող-

մից **պահանջվող** ապացույցները և տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունը: Այնուհետև, որպես այլ, ինքնուրույն փաստակազմ, նորմն իրավական հետևանքի առաջացումը (հայեցողական) կապում է՝ անձի կողմից իր նախաձեռնությամբ տեղեկատվություն չներկայացնելու հետ՝ չնախատեսելով նման տեղեկատվություն ներկայացնելու ուղղակի պարտականություն: Այսպիսով, հաշվի առնելով դատարանի ներկայացրած պահանջի հանգամանքը, կարելի է արձանագրել, որ առաջին դեպքում առկա է տեղեկատվություն ներկայացնելու պարտականություն, երկրորդ դեպքում՝ առնվազն նորմի փաստակազմը հնարավորություն չի տալիս խոսել նման պարտականության մասին, ինչը ենթադրում է, որ տեղեկատվություն ներկայացնելը թողնվել է կողմի բարեխղճությանը, այլ կերպ՝ իրավիճակը դիտարկվում է սուբյեկտիվ իրավունքի հարթությունում: Նշված փաստակազմերի դեպքում, կողմի վարքագիծը գնահատելու իմաստով, Կանոնը լայն հայեցողություն է թողնում Դատարանին՝ արձանագրելով, որ Դատարանը *կարող է վարվել այնպես, (վարքագիծը գնահատել) ինչպես կցանկանա*: Նման մոտեցումը ևս հիմք է տալիս ենթադրելու, որ Դատարանին ընձեռնված է օբյեկտիվ հնարավորություն՝ տարբերակելու պարտականության չկատարման դեպքը, իրավունքը՝ իր գործառույթին հակառակ, այլ շահերի վնաս պատճառելու նպատակով՝ պասիվ ձևով (*անձնական դրդապատճառներով տեղեկատվություն չներկայացնելը*) իրացնելուց: Ինչպես նկատել ենք, ՄԻԵԴ գանգատի ընդունելության չափանիշների վերաբերյալ ուղեցույցում՝ *35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետի իմաստով «չարաշահում» հասկացությունը պետք է ընկալվի իր սովորական նշանակությամբ՝ ընդհանուր իրավական տեսության համաձայն: Մասնավորապես, որպես իրավունքի (սուբյեկտիվ) իր ստեղծման նպատակներից տարրերվող, այլ նպատակների համար վնասակար իրականացում²³, այլ ոչ թե պարտականության չկատարում (ընդգծումը մերն է):*

Հաշվի առնելով ՄԻԵԴ՝ «չարաշահում» հասկացության վերաբերյալ տրված մեկնաբանությունը և 44 C կանոնի՝ անձնական դրդապատճառներով տեղեկատվություն չներկայացնելու փաստակազմի վերաբերյալ սույն աշխատանքի շրջանակներում կատարված վերլուծությունները, արձանագրում ենք, որ նման իրավիճակում Դատարանը սուբյեկտիվ իրավունքի կրողի վարքագիծը պետք է գնահատի որպես չարաշահում: Այլ է խնդիրը՝ Դատարանի պահանջով ապացույցներ և տեղեկատվություն չներկայացնելու դեպքում: Այսպես, եթե Կանոնակարգի 44 C կանոնը, նշված փաստակազմի իմաստով, կողմի վրա դնում է նման ձևով (*Դա-*

www.aradaradutyjournal.com

www.ardaradutyjournal.com

տարանի պահանջով ապացույցներ և տեղեկատվություն (ներկայացնել) վարույթին արդյունավետ մասնակցելու պարտականություն, ապա Դատարանի պահանջած տեղեկատվությունը չներկայացնելը, որը կարող էր նպաստել գործի արդարացի և արդյունավետ քննությանը, չարաշահում որակելը (ինչպես երևում է վերը նշված նախադեպային օրինակներում) վիճելի է, քանզի մենք ունենք պարտականության չկատարման, այլ ոչ թե սուբյեկտիվ իրավունքի իրացման դեպք: Այլ կերպ՝ պարտականության չկատարումն արդեն իսկ ենթադրում է սուբյեկտիվ իրավունքի իրացումից դուրս վարքագիծ: Իսկ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման առանձնահատկությունը նրանում է, որ բուն վարքագիծը պոզիտիվ իրավունքի տեսանկյունից իրավաչափ է: Խեղված են այն նպատակները, որոնք հետապնդում է իր իրավունքն անբարեխիղճ իրացնողը: Նպատակներ, որոնք չեն արտահայտում կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի էությունը և գործառույթը: Կարծում ենք՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դոկտրինը պետք է գնահատել բացառապես իրավունքի, իր նպատակին հակառակ, իրացման լույսի ներքո: Նման իրավիճակները չարաշահում որակելու Դատարանի պրակտիկան հենված է այն թեզի վրա, որ, ամեն դեպքում, դիմողն օգտագործում է իր գանգատի իրավունքը՝ չկարևորելով այն հանգամանքը, որ դիմողի գանգատի հիմքում դրված է, որպես այդպիսին, խախտումը (օրինակ՝ կեղծ փաստաթղթեր ներկայացնելը, Դատարանի պահանջած տեղեկությունները չներկայացնելը): Այլ կերպ՝ անձի կողմից գանգատի իրավունքի օգտագործումը ընդամենը միջոց է կանոնակարգային պահանջները խախտելու համար, ինչը չարաշահման տիրույթում դիտարկելը, ինչպես նշվեց, վիճելի է: Այս համատեքստում կարևորում ենք նաև Կանոնակարգի 44 A կետի իրավակարգավորումը (Դատարանի հետ համագործակցելու պարտականությունը), որը, արդարադատության կայացման նպատակներից ելնելով, կողմերի վրա դնում է Դատարանի հետ համագործակցելու ընդհանուր պարտականություն, մասնավորապես, ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք Դատարանի կողմից անհրաժեշտ կհամարվեն²⁴:

ՄԻԵԴ պրակտիկան, գանգատի իրավունքի չարաշահման հիմքով, դրա մերժման դեպքերին է վերագրում նաև Դատարանի հասցեին, խելամիտ քննադատությունից դուրս²⁵, վիրավորական արտահայտություններ անելը և (կամ) սպառնալիքը²⁶ պայմանով, որ դիմումատուն նախազգուշացվել է նման վարքագծի համար²⁷: Եթե գործի քննության ընթացքում դիմումատուն հատուկ նախազգուշացվում է և այլևս չի օգտագործում անտեղի, վիրավորական արտահայտություններ, ներողություն է

խնդրում, ապա գանգատը չի կարող մերժվել չարաշահման հիմքով²⁸: Դիտարկելով ՄԻԵԴ՝ Դատարանի կամ մյուս կողմի հասցեին, հատկապես, վիրավորանք պարունակող արտահայտությունները, գանգատի իրավունքի չարաշահման կոնտեքստում գնահատելու վերաբերյալ պրակտիկան, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի կարևոր հարցի, որը կապված է ՄԻԵԴ կանոնակարգի 44 D (Կողմերի անթույլատրելի ձևակերպումները) կանոնում սահմանված արգելքի հետ: Կանոնի համաձայն, եթե Կողմի ներկայացուցիչը ներկայացնում է, ըստ էության, վիրավորական, անբարեխիղճ «...» փաստեր, ապա Պալատի նախագահողն իրավասու է նման սուբյեկտին հեռացնել վարույթից, կամ ձեռնարկել այլ միջոցներ, որոնք Նախագահողը նպատակահարմար կգտնի²⁹: Նորմի փաստակազմի վերլուծությունից պարզ է դառնում, որ կողմի վրա առնվազն դրված է չվիրավորելու պարտականություն, ինչի համար նախատեսվում է նաև իրավական հետևանք վարույթից հեռացնելու ձևով, կամ իրավական հետևանքի ընտրությունը թողնվում է Նախագահողին: Ինչպես նախորդ դեպքում բերված հիմնավորումներով, այս դեպքում ևս՝ վիճելի է փաստացի պարտականության չկատարելը գանգատի իրավունքի չարաշահման կոնտեքստում դիտարկելու ՄԻԵԴ-ի պրակտիկան:

ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան գանգատի իրավունքի չարաշահման հետ է կապում նաև Կոմվենցիայի 39-րդ հոդվածի 2-րդ և Դատարանի կանոնակարգի 62-րդ կանոնի 2-րդ կետերով՝ գաղտնի համարվող հաշտության համաձայնության պայմանները հրապարակայնացնելը³⁰: Նորմերի համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ նշված տեղեկատվությունը չհրապարակայնացնելը՝ կողմի պարտականությունն է: Այդ մասին իր իրավական դիրքորոշումներում ընդգծում է նաև Դատարանը՝ փորձելով առանձնացնել այն իրավիճակները, որոնք կողմի համար առաջացնում են չհրապարակայնացնելու պարտականություն, այն դեպքերից, երբ նման պարտականությունը դնելը, և հրապարակայնացնելու համար, որպես հետևանք, գանգատի իրավունքի չարաշահման հիմքով այն մերժելը, իրավաչափ չի համարվի³¹: Ասվածը ենթադրում է, որ, առնվազն, Դատարանի կողմից մատնանշված դեպքերում, կողմի՝ հաշտության համաձայնության պայմանները հրապարակայնացնելը, որևէ կերպ չի կարելի համարել վերջինիս իրավունքը: Նման իրավիճակում ևս անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ է հնարավոր պարտականության չկատարումը գանգատի սուբյեկտիվ իրավունքի չարաշահում գնահատվում, երբ մենք գործ ունենք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փաստացի Կանոնակարգային նորմերի խախտման հետ:

Եթե նախորդ դեպքերը սուբյեկտիվ իրավունքի չարաշահման լույսի ներքո գնահատելը, մեր կարծիքով, խնդրառու են (քննարկվող ինստիտուտը անհրաժեշտ է կապել միայն սուբյեկտիվ իրավունքի իրացման հետ), ապա նույնը չի կարելի ասել ՄԻԵԴ պրակտիկայում, բավականին մեծ ծավալների հասնող, այսպես կոչված՝ «նույնաբովանդակ» և գործընթացները ձգձգելու նպատակ հետապնդող (vexatious application) բողոքների վերաբերյալ: Այստեղ անհրաժեշտ է հասկանալ այն իրավիճակները, երբ դիմումատուն գիտակցաբար, դատարանին անհիմն ծանրաբեռներու նպատակով, կամ անձնական տարբեր նկատառումներով, գործի վերջնական լուծումը ձգձգելով՝ ներկայացնում է նույնաբովանդակ, նոր տեղեկատվություն չպարունակող գանգատներ: Դիմումատուի վարքագիծը չարաշահում գնահատելու համար անհրաժեշտ է, որ բողոքը ներկայացնի նույն անձը, նույն պետության դեմ, նույն փաստական հանգամանքների վերաբերյալ, որոնք, այլ գանգատի շրջանակներում, դարձել են քննության առարկա:

Կոնվենցիոն անհրաժեշտ փոփոխությունների արդյունքում³³ գանգատի իրավունքի չարաշահման հիմքով այն մերժելու դեպքերը նվազեցին՝ կապված «էական վնաս» չկրելու հիմքով գանգատն անընդունելի համարելու հետ: Մինչև նշված կոնվենցիոն փոփոխությունները, Դատարանը առանձին գործերի շրջանակում գանգատի իրավունքի չարաշահման հիմքով այն հայտարարել է անընդունելի, երբ գանգատի առարկան վերաբերել է ոչ էական վնասին³⁴: Կոնվենցիոն նշված լրացումների արդյունքում Դատարանը նման դեպքերում գանգատը պետք է հայտարարի անընդունելի ոչ թե ՄԻԵԴ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետի համաձայն, այլ՝ նույն կետի (b) ենթակետով (էական վնաս չկրելը):

Այն, որ սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հարցում ՄԻԵԴ-ի պրակտիկան գնահատողական է, կասկած չի հարուցում: Օրինակ՝ Դատարանն ընդգծում է, որ գանգատի իրավունքի չարաշահման կոնտեքստում հարցը չի կարելի դիտարկել, այն դեպքերում, երբ գանգատ ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքն օգտագործվում է՝ գովազդային, քարոզչական կամ որևէ կերպ ուշադրություն հրավիրելու նպատակով: ՄԻԵԴ-ն ակնհայտորեն ընդգծում է, որ դիմումատուն, ըստ էության, շեղվում է գանգատի նպատակներից, այլ կերպ՝ ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման ակնկալիքից՝ հետապնդելով այլ, քան գանգատի իրավունքի նպատակն է:

Այսպես, Կաճիալիևը և այլք ընդդեմ ՌԴ-ի գոր-

ծի շրջանակներում Կառավարությունը պնդում էր (կետ 66-րդ), որ բողոքը չունի իրավունքները վերականգնելու առաքելություն: Ըստ Կառավարության փաստարկների՝ բողոքի օբյեկտը և նպատակը ակնհայտ քաղաքական են և ուղղված են ցույց տալու ՌԴ-ի՝ մարդու իրավունքները խախտող քաղաքականությունը Չեչնիայի Հանրապետությունում: Կառավարությունը գտնում է, որ առկա է գանգատի իրավունքի չարաշահման հիմքով այն մերժելու իրավիճակ: Վերլուծելով գործի վերաբերյալ ՄԻԵԴ դիտարկումները՝ կարծում ենք, որ արդարացված է Դատարանի դիրքորոշումը նման փաստարկները չարաշահման տիրույթում չդիտարկելու թեզը: Սակայն այն իրավիճակները, երբ գանգատը օգտագործվում է ինքնագովազդի, որևէ կերպ ուշադրություն հրավիրելու նպատակով, անհրաժեշտ է որակել չարաշահման տիրույթում, եթե դրա արդյունքում տուժելու է հանրային շահը (պետություն, նրա մարմինների հեղինակություն և այլն): Այստեղ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում գտնել ճիշտ հաշվեկշիռ գանգատի իրավունքի (թեկուզ առերևույթ չարաշահված) և դրա չարաշահման արդյունքում որևէ շահի հասցված վնասի էության միջև:

Եզրահանգումներ: Կատարված վերլուծությունները թույլ են տալիս արձանագրելու՝

1. ՄԻԵԴ-ը ճանաչում է սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դեմ պայքարի 2 ինքնուրույն համակարգ՝ (a) ՄԻԵԴ 17-րդ հոդվածով սահմանված կոնվենցիոն իրավունքների չարաշահման արգելքը (նյութական իրավունքի չարաշահման արգելքի սկզբունք) և (b) 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետով նախատեսված անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահման արգելքը (դատավարական իրավունքի չարաշահման արգելքի սկզբունք):

2. ՄԻԵԴ 17-րդ հոդվածը նպատակ ունի Կոնվենցիոն իրավունքի կրողին թույլ չտալու, օգտագործելով Կոնվենցիոն իրավունքների պաշտպանության առարկան, դրսևորել այնպիսի վարք կամ զբաղվել այնպիսի գործունեությամբ, որոնք շեղվում են տվյալ կոնվենցիոն իրավունքի իրական գործառնությանից և նպատակներից:

3. ՄԻԵԴ 35-րդ հոդվածի 3-րդ կետի (a) ենթակետով նախատեսված անհատական գանգատ ներկայացնելու դատավարական իրավունքի չարաշահման արգելքի տակ պետք է հասկանալ՝ Դատարանի դիմելու իրավունքի չարաշահման արգելքը: Աշխատանքում կատարված դիտարկումների լույսի ներքո հակված ենք ընդգծելու, որ խոսքը դիմումի ընդունելության չափանիշները խախտելու մասին չէ՝ այլ գանգատ ներկայացնելու իրավունքի նպատակից շեղված իրացման մասին է:

www.aradaradailyjournal.com

¹ Տե՛ս, Andrew Grotrian. Article 6 of the European Convention of Human Rights: The Right to a Fair Trial (Human Rights) File № 13, 1994, Stavros. The Guarantees for Accused Persons under Article 6 of the European Convention of Human Rights, 1993, Trechsel. Human Rights in Criminal Proceeding, 2005.

² Տե՛ս, Perez v. France, 2004-I, 40 EHRR 909, § 64, GC.

³ Նկատենք, որ Կոնվենցիոն իմաստով «յուրաքանչյուր», «յուրաքանչյուր ոք» հասկացությունների տակ անհրաժեշտ է հասկանալ և՛ ՀՀ քաղաքացիներին, և՛ երկքաղաքացիներին, և՛ օտարերկրացիներին, և՛ ապաքաղաքացիներին: Հատկանշական է, որ Կոնվենցիայի պաշտպանությունը տարածվում է նաև երեխաների, հաշմանդամների վրա: ՄԻԵԴ-ի պրակտիկայում խնդիր է առաջանում բացառապես այն դեպքերում, երբ անհատական զանգատ է ներկայացնում, կոնկրետ Կոնվենցիոն իմաստով, պարտավոր կողմ հանդիսացող պետության տարածքում անօրինական կարգով գտնվող օտարերկրացին կամ ապաքաղաքացին: Դատարանը նման անձանց զանգատները ընդունում է քննության, եթե գտնում է, որ անձին պետության կողմից անօրինական իր տարածքում գտնվել ճանաչելը չի համապատասխանում չափանիշներին, որոնք ընդունված են ժողովրդավարական հասարակությունում:

Մանրամասն տե՛ս Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения / Под общ. ред. д. ю. н., проф. В. А. Туманова и д. ю. н., проф. Л. М. Энтина. – М.: Издательство НОРМА, 2002, С. 14-16.

⁴ Տե՛ս, Ilhan v. Turkey, 2000-VII, 34 EHRR 869, § 51, GC; Cardot v. France, A 200 (1991), 13 EHRR 853.

⁵ Տե՛ս, Yasa v. Turkey, 1998-VI, 28 EHRR 408.

⁶ Տե՛ս, Worm v. Austria, 1997-V, 25 EHRR 454.

⁷ Տե՛ս, Practical Guide on Admissibility Criteria. Council of Europe/European Court of Human Rights, 2018, p. 9-10.

(Հասանելի աղբյուրը՝ https://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_ENG.pdf 04.06.2019) CASE OF VAN DER TANG v. SPAIN (Application no. 19382/92), (Հասանելի աղբյուրը՝

<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-57946%22%5D%7D> 04.06. 2019): Նկատենք, որ Բարձր պայմանավորվող կողմերը երաշխավորում են իրենց իրավագրության ներքո գտնվող յուրաքանչյուրի իրավունքների ու ազատությունների համար պաշտպանությունից՝ անկախ ազգային պատկանելիությունից, բնակության վայրից, քաղաքացիության կարգավիճակից, իրավունակությունից: Հատկանշական է, որ ՄԻԵԿ երաշխավորված իրավունքների պաշտպանություն կարող են ակնկալել նաև անչափահասները (տե՛ս CASE OF A. v. THE UNITED KINGDOM (100/1997/884/1096) (Հասանելի աղբյուրը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-58232%22%5D%7D> 04.06. 2019) և իրավունակությունը կորցրած անձինք (CASE OF ZEHENTNER v. AUSTRIA (Application no. 20082/02) (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GubNf>, 04.06. 2019):

⁸ ՀՀ Սահմանադրության գործող տեքստի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք»: «Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ» նշված 74-րդ հոդվածի ուժով՝ կրող են հանդիսանում նաև իրավաբանական անձինք: Կոնվենցիոն իմաստով իրավաբանական անձը կարող է իր իրավունքների և ազատությունների համար անհատական զանգատ ներկայացնել ՄԻԵԿ, եթե կան հիմնավոր փաստեր, որ այն անդամ պետության լայն իմաստով գործողությունների գոհ է և ՄԻԵԿ 34-րդ հոդվածի իմաստով «ոչ կառավարական կազմակերպություն է» (“non-governmental organization”): Իրավաբանական անձանց անհատական զանգատների ընդունելության առանձնահատկությունների մասին տե՛ս Practical Guide on Admissibility Criteria. Council of Europe/European Court of Human Rights, 2018, p. 10. (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GMu7H> 04.06. 2019).

⁹ Տե՛ս, Case Demirbaş and Others v. Turkey (Applications no. 1093/08, 301/08 303/08, 306/08 309/08, 378/08, 382/08, 410/08, 421/08, 773/08, 883/08,1023/08, 1024/08, 1036/08, 1260/08, 1353/08, 1391/08, 1403/08, 2278/08) (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GMvj5> 04.06. 2019).

¹⁰ Տե՛ս, Practical Guide on Admissibility Criteria. Council of Europe/European Court of Human Rights, 2018, p.10-15. (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GMu7H> 04.06. 2019).

¹¹ ՄԻԵԿ-ի զանգատի ընդունելիության չափանիշների վերաբերյալ ուղեցույցերում և Դատարանի նախադեպային իրավունքում ընդգծվում է, որ զանգատի անհիմն լինելու «ակնհայտությունը» ենթադրում է՝ ցանկացած սովորական ընթերցողի տեսանկյունից այդպիսին լինելը: Այսինքն, խոսքը նույնիսկ մասնագիտական գնահատականի մասին չէ:

¹² Տե՛ս, Practical Guide on Admissibility Criteria. Council of Europe/European Court of Human Rights, 2018, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GMu7H> 04.06. 2019) p. 21-40.

¹³ ՄԻԵԿ-ը գործի քննության ցանկացած փուլում կարող է զննատել զանգատի ընդունելության հարցը *ratione loci*, *ratione materiae*, *ratione personae* *ratione temporis* անհամապատասխանության հանգամանքներով: Այս մասին մանրամասն տե՛ս Case of Sejdíć and Finci v. Bosnia and Herzegovina (Applications nos. 27996/06 and 34836/06), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GTaXq> 06.06. 2019).

¹⁴ Տե՛ս, Case of Velikova v. Bulgaria, § 57 (Applicatiú n no. 41488/98) (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GTZin> 06.06. 2019):

¹⁵ Տե՛ս, Practical Guide on Admissibility Criteria. Council of Europe/European Court of Human Rights, 2018, p. 41. (Հասանելի աղբյուրը՝ https://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_ENG.pdf 11.06. 2019), AFFAIRE MIROUBOVS ET AUTRES c. LETTONIE, (§§ 62, 65), (Requête no 798/05), (Հասանելի աղբյուրը՝

www.aradaradutyjournal.com

<https://clck.ru/Gfm7U>, 10.06.2019), CASE OF S.A.S. v. FRANCE, GRAND CHAMBER, (Application no. 43835/11), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/HaWWK>, 10.06.2019).

¹⁶ Տե՛ս, Branka JOVANOVIĆ v. Serbia (Application no. 48793/11), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVZx2>, 10.06.2019), Այս մասին նաև տե՛ս (Gross v. Switzerland [GC], Application no. 67810/10, § 28, ECHR 2014, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaFJ>, 10.06.2019), S.A.S. v. France [GC], Application no. 43835/11, § 67, ECHR 2014, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaHg>, 10.06.2019), Predescu v. Romania, Application no. 21447/03, §§ 25-27, 2 December 2008, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaR6>, 10.06.2019), Zoran Komatinović v. Serbia (dec.), Application no. 75381/10, 29 January 2013). (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaV3>, 10.06.2019).

¹⁷ Տե՛ս, Case of Tjitske Drijfhout v. the Netherlands, (Application no. 51721/09), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GWjot>, 10.06.2019):

¹⁸ Տե՛ս, Mohammad Hossein Bagheri and Malihe Maliki v. the Netherlands (Application no. 30164/06), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GWk94>, 10.06.2019):

¹⁹ Տե՛ս, Affaire Predescu c. Roumanie (Requete no 21447/03), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GWmFr>, 11.06.2019):

²⁰ Տե՛ս, Право Европейской конвенции по правам человека / Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание . – М.: Развитие правовых систем, 2016. С. 103.

²¹ Տե՛ս, Case of Centro Europa 7 S.R.L. and Di Stefano v. Italy (Application no. 38433/09), p. 96-100, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYm9r>, 13.06.2019):

²² Տե՛ս, Регламент Европейского суда по правам человека (в буквальном переводе с оригинала “Правила Суда”) регулирует организационные вопросы деятельности Европейского суда и детализирует процессуальные формы правосудия, осуществляемого Европейским судом. стр. 25, (Հասանելի աղբյուրը՝ <https://roseurosud.org/images/reglament-espch.pdf>, 18.06.2019):

²³ Տե՛ս, Affaire Miroļubovs et Autres c. Lettonie, 62, (Requête no 798/05), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gfm7U>, 20.06.2019):

²⁴ Տե՛ս, Регламент Европейского суда по правам человека նշված աշխ. էջ 24 (Հասանելի աղբյուրը՝ <https://roseurosud.org/images/reglament-espch.pdf>, 18.06.2019):

²⁵ Ալեքսանյանն ընդդեմ ՌԴ-ի գործի շրջանակներում Գատարանը ընդգծեց, որ արտահայտություններն էնցիոնալ են, տեղին չեն, ունեն երկխոսության բովանդակություն և այդ տրամաբանությամբ դուրս չեն չեն գալիս բուլլատրելիության սահմանից: Նկատենք, որ քննության առարկա էր դարձել դիմումատուի հետևյալ արտահայտությունները՝ «Վառավարությունը սուտ է փաստարկում», «անպատասխանատու հայտարարություն է անում»: Այս մասին տե՛ս Case of Aleksanyan v. Russia, (Application no. 46468/06), §116-118, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYnRu>, 13.06.2019):

²⁶ Տե՛ս, Présentée par Liborio Di Salvo contre l'Italie (contre l'Italie de la requete no 16098/05), B. Appreciation de la Cour (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYngE>, 13.06.2019):

²⁷ Տե՛ս, Case of nold v. Germany, (Application no. 27250/02), §87-90 (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYo8u>, 13.06.2019):

²⁸ Տե՛ս, Рябцева Е. В. Նշված աշխ. С. 69.

²⁹ Տե՛ս, Регламент Европейского суда по правам человека նշված աշխ. էջ 25 (Հասանելի աղբյուրը՝ <https://roseurosud.org/images/reglament-espch.pdf>, 18.06.2019):

³⁰ Տե՛ս, Case of Popov v. Moldova, (Application no. 74153/01), §48, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Getzg>, 19.06.2019):

³¹ Տե՛ս, Dana Hadrabová, Lenka Hadrabová, Hedvika Hadrabová, Zdeňka Křivánková, Dušan Křivánek, Lenka Horká and Miloš Horký v. Czech Republic (Application no. 42165/02), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gf29j>, 19.06.2019):

³² Տե՛ս, G. & D.M. v. the United Kingdom, (Application No. 13284/87), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GkcgQ>, 25.06.2019):

³³ Տե՛ս, Մարդու իրավունքների և հիմնարար զգալությունների պաշտպանության կոնվենցիայի մասին վերահսկողության համակարգը փոփոխող և լրացնող թիվ 14 արձանագրություն, հոդված 12-րդ (ընդունման ամսաթիվը՝ 13.05.2004 թ., ՀՀ ԱԺ կողմից վավերացման ամսաթիվը՝ 17.05.2010թ.: (Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2010.06.09/25(759).

³⁴ Տե՛ս, Stephan Bock v. Germany, (Application no. 22051/07), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GkinK>, 25.06.2019):

³⁵ Տե՛ս, Case of Khadzhaliev and others v. Russia, §66,67 (Application no. 3013/04), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Go7GN>, 27.06.2019):

Օգտագործված գրականության ցանկ

1. Grotian. Article 6 of the European Convention of Human Rights: The right to fair trial, Council of Europe Human Rights, File № 13, 1994, Stavros. The Guarantees for Accused Persons under Article 6 of the European Convention of Human Rights, 1993, Trechsel. Human Rights in Criminal Proceeding, 2005.
2. Perez v. France, 2004-I, 40 EHRR 909, § 64, GC.
3. Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения / Под общ. ред. д. ю. н., проф. В. А. Туманова и д. ю. н., проф. Л. М. Энгина. – М.: Издательство НОРМА, 2002.

4. Ilhan v. Turkey, 2000-VII, 34 EHRR 869, § 51, GC; Cardot v. France, A 200 (1991), 13 EHRR 853. Yasa v. Turkey, 1998-VI, 28 EHRR 408. Worm v. Austria, 1997-V, 25 EHRR 454.
5. Practical Guide on Admissibility Criteria. Council of Europe/European Court of Human Rights, 2018, Հասանելի աղբյուրը՝ https://www.echr.coe.int/Documents/Admissibility_guide_ENG.pdf 04.06.2019)՝ Case of VAN der tang v. Spain (Application no. 19382/92), (Հասանելի աղբյուրը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-57946%22%5D%7D>); 04.06. 2019). Case of A. v. the UK (100/1997/884/1096) (Հասանելի աղբյուրը՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-58232%22%5D%7D>); 04.06. 2019) և իրավունակությունը կորցրած սննդի (Case of Zehentner v. Austria (Application no. 20082/02) (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GubNf>, 04.06. 2019):
6. Case Demirbaş and Others v. Turkey (Applications no. 1093/08, 301/08, 303/08, 306/08 309/08, 378/08, 382/08, 410/08, 421/08, 773/08, 883/08,1023/08, 1024/08, 1036/08, 1260/08, 1353/08, 1391/08, 1403/08, 2278/08) (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GMvj5> 04.06. 2019)
7. Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina (Applications nos. 27996/06 and 34836/06), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GTaXq> 06.06. 2019).
8. Case of Velikova v. Bulgaria, §57 (Application no. 41488/98) (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GTZin> 06.06. 2019):
9. Affaire miroļubovs et autres c. Lettonie, (§§ 62, 65), (Requête no 798/05), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gfm7U>, 10.06. 2019), Case of S.A.S. v. France, grand chamber, (Application no. 43835/11), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/HaWWK>, 10.06. 2019).
10. Branka Jovanović v. Serbia (Application no. 48793/11), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVZx2>, 10.06. 2019), Այս մասին մաս տե՛ս (Gross v. Switzerland [GC], Application no. 67810/10, § 28, ECHR 2014, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaFJ>, 10.06. 2019), S.A.S. v. France [GC], Application no. 43835/11, §67, ECHR 2014, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaHg>, 10.06. 2019), Predescu v. Romania, Application no. 21447/03, §§ 25-27, 2 December 2008, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaR6>, 10.06. 2019), Zoran Komatinović v. Serbia (dec.), Application no. 75381/10, 29 January 2013). (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GVaV3>, 10.06.2019).
11. Case of Tjitske Drijfhout v. the Netherlands, (Application no. 51721/09), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GWjot>, 10.06.2019):
12. Mohammad Hossein Bagheri and Malihe Maliki v. the Netherlands (Application no. 30164/06), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GWk94>, 10.06.2019):
13. Affaire Predescu c. Roumanie (Requête no 21447/03), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GWmFr>, 11.06.2019):
14. Право Европейской конвенции по правам человека / Харрис, О'Бойл и Уорбрик; - Науч. Издание . – М.: Развитие правовых систем, 2016
15. Case of Centro Europa 7 S.R.L. and Di Stefano v. Italy (Application no. 38433/09), § 96-100, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYm9r>, 13.06.2019):
16. Регламент Европейского суда по правам человека (в буквальном переводе с оригинала “Правила Суда”) (Հասանելի աղբյուրը՝ <https://roseurosud.org/images/reglament-espch.pdf>, 18.06.2019):
17. Affaire Miroļubovs et Autres c. Lettonie, § 62, (Requête no 798/05), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gfm7U>, 20.06.2019):
18. Case of Aleksanyan v. Russia, (Application no. 46468/06), §116-118, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYnRu>, 13.06.2019):
19. Présentée par Liborio Di Salvo contre l’Italie (contre l’Italie de la requête no 16098/05), B. Appréciation de la Cour (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYngE>, 13.06.2019):
20. Case of nold v. Germany, (Application no. 27250/02), §87-90 (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GYo8u>, 13.06.2019):
Case of Popov v. Moldova, (Application no. 74153/01), §48, (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Getzg>, 19.06.2019):
21. Dana Hadrabová, Lenka Hadrabová, Hedvika Hadrabová, Zdeňka Křivánková, Duš an Křivánek, Lenka Horká and Miloš Horký v. Czech Republic (Application no. 42165/02), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Gf29j>, 19.06.2019):
22. G. & D.M. v. the United Kingdom, (Application No. 13284/87), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GkcgQ>, 25.06.2019):
23. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի մասին վերահսկողության համակարգը փոփոխող և լրացնող թիվ 14 արձանագրություն, հոդված 12 (ընդունման ամսաթիվը՝ 13.05.2004 թ., ՀՀ ԱԺ կողմից վավերացման ամսաթիվը՝ 17.05.2010: (Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2010.06.09/25(759).
24. Stephan Bock v. Germany, (Application no. 22051/07), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/GkinK>, 25.06.2019):
25. Case of Khadzhaliev and others v. Russia, §66,67(Application no. 3013/04), (Հասանելի աղբյուրը՝ <https://clck.ru/Go7GN>, 27.06.2019):

Манук МурадянНачальник юридического управления полиции РА,
полковник полиции,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

*Вопросы злоупотребления субъективным правом
в прецедентном праве Европейского суда*

Предметом второй части научной статьи “Вопросы злоупотребления субъективным правом в прецедентном праве Европейского суда” является запрет на злоупотребление правами в Европейской конвенции о защите прав человека и основных свобод и в прецедентное право Европейского суда по правам человека. Однако в этом случае мы попытались сосредоточить наше внимание на проблеме запрещения злоупотребления индивидуальной жалобой в соответствии с подпунктом (а) пункта 3 статьи 35 ЕКПЧ.

Ключевые слова: субъективное право, злоупотребление, ЕКПЧ, ЕСПЧ, прецедентное право.

Manuk MuradyanHead of the Legal Department of the Police of RA
Police Colonel,
Candidate of Legal Sciences, Associate Professor

SUMMARY

Issues of abuse of rights in the case-law of the European court

The subject of the second part of a scientific article of “Issues of abuse of rights in the case-law of the European court” is the prohibition of abuse of rights in the European Convention about the Protection of Human Rights and Fundamental Freedom and in the Case-law of the European Court of Human Rights. However, in this case we try to focus our attention in the problem of the prohibition of abuse of individual complaint in accordance with subparagraph (a) of paragraph 3 of Article 35 of the ECHR in this part of article.

Key words: rights, abuse of rights, ECHR, Case-law.

Բնագիրը ներկայացվել է 28.01.2020թ.

Ընդունվել է տպագրության 19.02.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ղամբարյանը

ԱՌՆՈՒԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ներկայացված հոդվածում հեղինակը քննարկում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին բնորոշ հայեցակարգային առանձնահատկությունները՝ ռոմանոզերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերի տեսանկյունից: Հոդվածում արտահայտված դիտարկումների հիման վրա հեղինակը ներկայացնում է հիմնավորումներ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի դատավարական մոդելը բարեփոխելու անհրաժեշտության վերաբերյալ:
Հիմնարաներ- պրևենտիվ միջոց, բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, հոգեբույժի մասնակցություն, հատուկ վարույթ:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի կիրառմամբ, ՀՀ-ում հոգեկան խանգարում ունեցող անձանցից բխող վտանգը չեզոքացնելու նպատակով՝ ազատության իրավունքի սահմանափակմամբ պրևենտիվ միջոցի կիրառումը նախատեսված է քաղաքացիադատավարական ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց մեղսագրվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարում: Տվյալ պարագայում կիրառվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգը:

Տեսական գրականությունում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց ազատության իրավունքի սահմանափակումը քրեադատավարական ընթացակարգի շրջանակներում ընդունվում է ոչ միանշանակ՝ ելնելով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների (այսուհետ՝ նաև ԲԲՀՄ) իրավական բնույթից: Մասնավորապես, մի շարք տեսաբաններ հակված են այն մտեցման, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառմամբ ծագող հարաբերությունները դուրս են քրեաիրավական հարթությունից, քանի որ՝

ա) հոգեկան հիվանդությամբ տառապող անձինք կարող են կատարել հանցագործություն չհամարվող արարքներ¹,

բ) քրեական օրենքով նախատեսված նպատակները ԲԲՀՄ չեն հետապնդում. չեն ուղղում քրեական օրենքով արգելված արարք կատարած անձանց և չեն առաջացնում դատվածություն²:

Միաժամանակ, նշենք, որ որոշ տեսաբաններ էլ գտնում են, որ ԲԲՀՄ-ի կիրառումը պետք է կազմակերպվի քրեադատավարական կառուցակարգի շրջանակներում՝ հաշվի առնելով վարույթի առանձնահատկությունները³:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգեկան հիվանդությամբ տառապող այն անձանց նկատմամբ, ում մեղսագրվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարում, քրեադատավարական ընթացակարգով բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառումն, ըստ էության, ընդունելի չի համարվում նաև արտասահմանյան որոշ երկրներում: Մասնավորապես՝ Ֆրանսիայում, Չինաստանում, Ճապոնիայում ԲԲՀՄ-ն նշանակվում են քաղաքացիական կամ վարչական օրենսդրությամբ⁴: Ավելին, հարկ է նշել, որ հետխորհրդային ԱՊՀ երկրներից Վրաստանում՝ 2007 թվականին քրեական օրենսգրքում, նույնիսկ, ուժը կորցրած է ճանաչվել ԲԲՀՄ-ի կիրառմանը նվիրված 6-րդ բաժինը՝ դրանք նախատեսելով⁵ «Հոգեբուժական օգնության մասին» օրենքով և կիրառվել դրանց նշանակման վարչական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգը: Սակայն, օրենսդրական փոփոխությունների արդյունքում, թեև ԲԲՀՄ-ի կիրառման նյութաիրավական հիմքերը շարունակվում են կարգավորվել «Հոգեբուժական օգնության մասին» օրենքով, սակայն ընթացակարգը նախատեսված է միայն քրեադատավարական օրենսդրությամբ⁶:

Հաշվի առնելով բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառման հիմքում ընկած նյութաիրավական ինստիտուտների առանձնահատկությունները՝ մեր համոզմամբ

www.ardaradutyjournal.com

ԲԲՀՄ-ի կիրառմամբ ծագող հարաբերությունների իրավական բնույթի մասին ներկայացված տեսական դատողություններն այնքան էլ հիմնավոր չեն:

Այսպես, նախ պետք է արձանագրել, որ անմեղսունակ անձանց նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման հիմքում ընկած առանցքային փաստը՝ քրեական օրենքով արգելված արարքն անմեղսունակության վիճակում կատարելն է, որը բացառում է ոչ թե մեղսագրվող արարքի հակաիրավականությունը, այլ՝ անձի մեղքն այդ արարքում: Նյութական իրավունքում մեղքի տեսությունը ոչ միայն հիմնված է դիտավորության կամ անգոյություն ձևերի, այլ նաև մեղքի պայմանների վրա, որոնց շարքին է դասվում նաև անձի մեղսունակությունը: Այսինքն՝ անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության քրեական օրենքով արգելված արարքի (դելիկտի) կատարման համար, քանի որ անմեղսունակությունը բացառում է նրա մեղքն այդ արարքում, այլ ոչ թե՝ դրա հակաիրավականությունը: Առավել պատկերավոր ներկայացնելու համար պետք է նշել, որ անմեղսունակությունն ինստիտուցիոնալ առումով, ըստ էության, նույնանում է օրինակ՝ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ վնաս պատճառելու ինստիտուտի հետ: Ավելին, այն նույնիսկ դասական իմաստով կլանվում է առանց մեղքի վնաս պատճառելու նյութաիրավական ինստիտուտի մեջ: Նշված ինստիտուտների պարագայում առաջ է գալիս մի իրավավիճակ, որը բացառում է անձին քրեական պատասխանատվության ենթարկելը՝ մեղքի բացակայության պատճառով: Մինչդեռ հետխորհրդային երկրների քրեական օրենսգրքերում, դրանք ոչ միայն չեն դիտարկվում միևնույն հարթության վրա, այլ՝ դասվում են անձի արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների շարքին: Ելնելով այս հանգամանքից՝ ձևավորված տեսությունը նույնպես բացառում է անմեղսունակների կողմից կատարված արարքների հանցավորությունը: Այնինչ, վերոնշյալ բոլոր դեպքերում, ընդամենը որոշակի իրավական վիճակի առկայության պատճառով, բացառվում է քրեական պատասխանատվությունը, ոչ թե՝ կատարած արարքի հանցավորությունը: Հենց այդ պատճառով է, որ ներկայումս շրջանառության մեջ գտնվող ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի 6-րդ գլխում այդ դեպքերը դիտարկվում են ոչ թե որպես արարքի հանցավորությունը, այլ՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ:

Ուստի պետք է փաստել, որ անմեղսունակ անձինք իրենց վարքագծով վնաս են պատճառում քրեական օրենքով պաշտպանվող հասարակա-

կան հարաբերությունների ամբողջությանը, որն էլ հիմք է հանդիսանում քրեական վարույթ նախաձեռնելու և քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ՝ նրանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու համար: Ընդ որում, թեև ԲԲՀՄ-ով սոցիալական արդարությունը չի վերականգնվում, ուղղման գործընթաց չի ապահովվում, սակայն կանխվում է հետագա հանցագործությունների կատարումը (մասնավոր պրևենցիայի դրսևորմամբ), ինչը քրեական օրենքով հետապնդվող նպատակներից է: Այլ կերպ, իրականացվում է պրևենտիվ արդարադատություն, որի արդյունքում՝ անձը ենթարկվում է սոցիալական ռեաբիլիտացիայի և բուժվում է, որն էլ իր հերթին հանգեցնում է նրա կողմից հետագայում հակաիրավական այլ արարքների կատարման կանխմանը:

Նման պայմաններում պետք է փաստել, որ քրեական օրենքով հետապնդվող բոլոր նպատակներին համահունչ չլինելը, քրեաիրավական հետևանքներ չառաջացնելը թեև վկայում են այն մասին, որ ԲԲՀՄ-ը դասական իմաստով քրեաիրավական բնույթ չունեն, սակայն դրանց կիրառման հիմքում ընկած՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստը վկայում է այն մասին, որ ԲԲՀՄ-ն ենթակա են նշանակման քրեական դատավարության շրջանակներում:

Վերոնշյալ մտտեցմամբ է պայմանավորված եղել նաև այն, որ պատմականորեն հակաիրավական արարք կատարած անձանց բժշկական հաստատություններում տեղավորելու իրավական հիմքերը նախատեսվել են քրեական օրենսդրությամբ:

Ռոմանոզերմանական իրավական համակարգի երկրների օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ ԲԲՀՄ-ը կիրառվում են քրեադատավարական գործիքակազմի ներգրավմամբ, գործընթացն, ընդհանուր առմամբ, առանձնանում է հայեցակարգային բնույթի հետևյալ առանձնահատկություններով:

Նախ, ԲԲՀՄ-ի նշանակումը որոշ դեպքերում ուղեկցվում է հատուկ ընթացակարգի կիրառմամբ: Այսինքն՝ այդ գործերով քրեական դատավարության ձևը տարբերվում է ընդհանուր հիմունքներով անցկացվող դատավարության ձևից: Իրավաբանական գրականությունում դատավարական ձևի տարբերակման տարբեր չափանիշներ են առաջարկվում, ինչպես օրինակ՝ սոցիալական կամ օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ պայմանավորված կարգավորմանը ենթակա հասարակական հարաբերությունների բնույթով⁸: ԲԲՀՄ-ի գործերով տար-

www.ardaradutyjournal.com

բերակված դատավարական ձև սահմանելու անհրաժեշտությունը դատավարագետների կողմից ևս հիմնավորվում է՝ հիմք ընդունելով կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բնույթն ու տարբերվող ապացուցման առարկան :

Նշված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, եթե փորձենք առանձնացնել կոնկրետ ԲԲՀՄ-ի կիրառման տարբերակված վարույթ սահմանելու անհրաժեշտությունը, մեր համոզմամբ, որպես ելակետ պետք է ընդունել դատավարության առանցքային սուբյեկտի՝ հոգեկան հիվանդությանը տառապելու հանգամանքը և գործի քննության մեթոդաբանական առանձնահատկությունները: Մասնավորապես, հատուկ վարույթը մի կողմից նպատակ է հետապնդում համապատասխան երաշխիքների ապահովմամբ օժանդակել քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարած և հոգեկան հիվանդությամբ տառապող անձին, մյուս կողմից՝ ձեռքբերել բավարար փաստական տվյալներ, այդ անձի բուժման նպատակով, իրավական ներգործության միջոցներ նշանակելու համար:

Քրեական օրենսդրությամբ արգելված արարք կատարած և հոգեկան հիվանդությամբ տառապող անձին բժշկական հաստատությունում տեղավորելու վարույթի իրավական երաշխիքների շրջանակը, որպես կանոն, ներառում է պաշտպանի և օրինական ներկայացուցչի պարտադիր մասնակցություն: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ պաշտպանի պարտադիր մասնակցության անհրաժեշտությունը բխում է արդարադատության շահերից և պայմանավորվում մեղադրյալի խոցելի վիճակով: Այն նպատակ է հետապնդում երաշխավորել հոգեկան հիվանդությամբ տառապող անձի կողմից վարույթի էությունն ընկալելու և դրան արդյունավետորեն մասնակցելու հնարավորությունը¹⁰:

Ավելին, տարբեր աղբյուրներում նույնիսկ որպես երաշխիք առաջ է քաշվում պաշտպանի, քննիչի, դատախազի, դատավորի հատուկ մասնագիտական պատրաստվածությունը: Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ուղղակիորեն չի նշում ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում հատուկ մասնագիտացված պաշտպանի մասնակցության վերաբերյալ պահանջ, սակայն ընդունելի է համարում, որ, առհասարակ, հատուկ վարույթի առկայությունը կարող է արդարացնել մասնագիտացված պաշտպանի մասնակցությունը¹¹: Եվրոպական միությունում խոցելի անձանց հետ աշխատող քրեական վարույթի սուբյեկտները պարտադիր անցնում են հատուկ վերապատրաստում¹²: Այս առումով հետխորհրդային երկրներում դեռևս

օրենսդրությունը գտնվում է զարգացման փուլում և հատուկ վերապատրաստում անցած դատավարական սուբյեկտների մասնակցության իրավական երաշխիքներ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթում նախատեսված չեն:

Իրավական երաշխիքների կապակցությամբ հարկ է նաև անդրադառնալ տեսական գրականությունում լայն տարածում ստացած այն մոտեցմանը, թե որպես երաշխիք ԲԲՀՄ-ի կիրառման գործերի քննությունը դատարանում պետք է վերապահել դատավորների մասնագիտացված կոլեգիալ կազմին¹³: Մեր համոզմամբ, դատարանի կոլեգիալ կազմի մասով նշված երաշխիքի նախատեսումը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով, որ՝ ա) այն լրացուցիչ գործոն չէ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի հետ հաղորդակցման առավել դյուրին պայմաններ ստեղծելու համար, ավելին՝ նույնիսկ կարող է ճնշող ազդեցություն ունենալ, բ) վերջիվերջո հոգեկան հիվանդությամբ տառապող անձի նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառման մասին որոշումը վերջնական չէ և կարող է վիճարկվել վերադաս դատական ատյաններում, որտեղ գործերը քննվում են դատավորների կոլեգիալ կազմով: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ անչափահասների գործերի նման կարելի է քննարկման առարկա դարձնել նման հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց գործերը ևս՝ մասնագիտացված դատավորի կողմից քննության առնելու կարգավորում նախատեսելով:

Մեր համոզմամբ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի երաշխիքների շարքը համալրման կարիք ունի՝ հոգեբույժի պարտադիր մասնակցության պահանջով, ինչն առավել դյուրին կդարձնի վարույթի ընթացքը՝ աջակցելով վարույթն իրականացնող մարմնին հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մասնակցությամբ քրեադատավարական գործողություններ իրականացնելիս: Մասնավորապես, այդ երաշխիքի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է հոգեբույժի մասնակցությամբ առանձին դատավարական գործողությունների կատարումն առավել մատչելի ձևով հոգեկան հիվանդությամբ տառապող անձին պարզաբանելու անհրաժեշտությամբ, ինչն, ըստ էության, արտացոլված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում¹⁴: Սակայն, հոգեբույժի մասնակցության իրավական հիմքերը որպես կանոն նախատեսված չեն մայրցամաքային իրավական համակարգում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում: Այնինչ, հոգեբույժը, համապատասխան մեթոդների կիրառմամբ, կարողանում է հա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դորդակցության մեջ մտնել հոգեկան հիվանդությանը տառապող անձի հետ և նրան տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն և պարզաբանումներ իրավական համակարգի, արդարադատության գործընթացի մասին¹⁵ : Այլ կերպ, պետք է փաստել, որ հոգեբույժի կողմից կիրառվող մասնագիտական մեթոդներն առավել դյուրին են դարձնում քրեական վարույթի ընթացքը, նպաստավոր պայմաններ են ստեղծում հոգեկան հիվանդությանը տառապող անձի կողմից քրեական վարույթի էության մասին հնարավորինս ճիշտ պատկերացում կազմելու և իր իրավունքների պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված այն, որ որպես կանոն քրեական դատավարության օրենսգրքերում, այդ թվում՝ նաև ՀՀ ՔԴՕ նախագծում, նախատեսվում է՝ անչափահասների հարցաքննությանն օրինական ներկայացուցչից բացի նաև հոգեբույժի մասնակցության պահանջը¹⁶ :

Մայրցամաքային իրավական համակարգի երկրներին բնորոշ առանձնահատկություններից է նաև ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի՝ ընդհանուր վարույթից տարբերվող ապացուցման առարկայի սահմանումը, որն, ի թիվս այլնի, ներառում է ԲԲՀՄ-ի կիրառման համար անհրաժեշտ փաստական տվյալների ձեռքբերման պահանջ: Այդ առումով առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում ապացույցների հավաքման դատավարական բեռի բաշխման կարգը, որը մայրցամաքային իրավական համակարգի երկրներին բնորոշ հաջորդ հայեցակարգային առանձնահատկությունն է:

Այսպես, նշված իրավական համակարգի երկրներում անձի՝ քրեական պատասխանատվությունը բացառող հոգեկան հիվանդությունը պարզելու պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները: Մասնավորապես անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու մասին հնարավոր կասկածի առկայության դեպքում քրեական հետապնդման մարմինները պարտավոր են միջոցներ ձեռնարկել այն պարզելու և անձի նկատմամբ ԲԲՀՄ-ի կիրառումն ապահովելու ուղղությամբ:

Ռոմանոգերմանական իրավական համակարգի երկրներում մեղադրանքի դատավարական կողմում գտնվող քրեական հետապնդում իրականացնելու առաքելություն ունեցող մարմինները կրում են նաև այնպիսի փաստական տվյալներ ձեռքբերելու պարտականություն, որոնք քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը բացառելով՝ ապահովում են անձի՝ քրեական պատասխանատվությունից ազատվելը: Նշված առանձնա-

հատկությունը գրականությունում քննարկման առարկա է դարձել և նշվել է, որ մեղադրանքի կողմ հանդիսացող սուբյեկտի կողմից արդարացնող բնույթի ապացույցներ ձեռքբերելը քրեադատավարական գործող մոդելի հիմնախնդիրներից է, որը հանգեցնում է դատավարական գործառույթների տարանջատման տրամաբանության խաթարմանը¹⁷, այնուամենայնիվ՝ այն դեռևս շարունակում է պահպանվել գործող ՀՀ ՔԴՕ-ում:

Նշվածն առավել խնդրահարույց բովանդակություն է ստանում ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի շրջանակներում, երբ մեղադրանքի կողմում գտնվող քրեական հետապնդման մարմինները՝ միջոցներ են ձեռնարկում անձի մեղքն առաջադրված մեղադրանքում անվերապահորեն բացառող ապացույցներ ձեռքբերելու ուղղությամբ: Ավելին, դրանք ստանալուց հետո գործն ուղարկվում է դատարան այն համոզմունքով, որ ենթադրյալ հանցանքի կատարման մեջ անձը հաստատապես մեղավոր չի ճանաչվելու և ազատվելու է քրեական պատասխանատվությունից: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է մայրցամաքային իրավական համակարգի երկրներում դեռևս գերիշխող նյութական (օբյեկտիվ) ճշմարտության տեսությամբ: Արդյունքում, ստացվում է, որ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի շրջանակներում անձի անմեղսունակության ապացուցման բեռի բաշխման կանոնները, անձի մեղսունակության կանխավարկածի սկզբունքի գործողության պայմաններում, կողմերի միջև էականորեն նվազեցնում են մրցակցությունը և, ըստ էության, նաև այն դարձնում առարկայազուրկ:

Նման պայմաններում պետք է արձանագրել, որ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի շրջանակներում իրականացվող գործունեությունը դասական իմաստով արդարադատության իրականացում համարվել չի կարող: Նշված պնդումը հիմնված է նաև տեսական աղբյուրներում տրվող արդարադատության այնպիսի բնորոշման վրա, որ այն պետության հանրային իշխանական գործունեության տեսակ է, որն ուղղված է սոցիալ-իրավական վեճերի օրինական և հիմնավոր լուծմանը¹⁸ : Մինչդեռ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթի շրջանակներում, նվազագույնի հասցված մրցակցության պայմաններում, ըստ էության, բացակայում է նաև այդպիսի վեճը, քանի որ քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստի արձանագրման պարագայում միևնույնն է անձն անվերապահորեն ազատվում է քրեական պատասխանատվությունից և պատժից:

Ավելին, հարկ է նշել, որ նույնիսկ քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստի

www.aradaradutyjournal.com

պարզումն, ըստ էության, կրում է երկրորդական բնույթ: Այլ կերպ, եթե անձը չունի ԲԲՀՄ-ի կիրառման կարիք, ապա քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստի պարզման անհրաժեշտությունը վերանում է: Մասնավորապես, եթե անձն առողջանում է գործի նախաքննության ընթացքում և այլևս չի ունենում ԲԲՀՄ-ի կիրառման կարիք, ապա գործող ԲԳՕ 460-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործը ենթակա է լինում կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման՝ առանց գործը դատարան ուղարկելու: Այսինքն՝ տվյալ պարագայում, օրենսդիրն այլևս անիմաստ է համարում քրեական օրենքով արգելված արարքի կատարման պարզումը՝ այդ կերպ այն դիտարկելով որպես ձևական ընթացակարգ՝ զուտ անձի բուժումն ապահովելու նպատակով:

Նման պայմաններում ակնհայտ է, որ ԲԲՀՄ-ի կիրառման վարույթին բնորոշ վերոնշյալ առանձնահատկությունները վկայում են այն մասին, որ բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառման հատուկ ընթացակարգը դասական իմաստով արդարադատության իրականացում համարվել չի կարող, ինչը չի կարելի վերագրել անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում ԲԲՀՄ-ի կիրառման ընթացակարգին:

Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում ևս հոգեկան հիվանդությամբ պայմանավորված ոչ առողջ միտք (non compos mentis) ունեցող անձինք ոչ թե ենթարկվում են քրեական պատասխանատվության, այլ՝ պրևենտիվ միջոցների կիրառմանը: Սակայն, դրանց կիրառման գործընթացը, այդ թվում՝ հոգեկան հիվանդության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատման չափանիշները, նշված իրավական համակարգում նույնպես ունեն հայեցակարգային էական առանձնահատկություններ:

Անգլոսաքսոնական իրավական համակարգում պրևենտիվ արդարադատության իրականացման պատմական արմատների ձևավորումը կապվում է ոստիկանության հիմնադրման հետ, որը տեղի ունեցավ 18-րդ դարի վերջից մինչ 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Դրան նպաստեցին նաև 18-րդ դարի հանրաճանաչ անգլիացի իրավաբան, դատավոր Ուիլյամ Բլեքստոնի կողմից ներկայացված մեկնաբանությունները պրևենցիայի մասին: Նա նշում էր, որ պրևենտիվ արդարադատությունն ավելի նախընտրելի է, քան պատժի վրա հիմնված արդարադատությունը¹⁹: Պրևենցիոն միջոցները դիտարկվում էին որպես ընդհանուր կանխարգելման միջոցառումներ, որոնք գլխավորապես մասնավորեցվեցին և էական

զարգացում ապրեցին 19-րդ դարի վերջին:

Անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներին բնորոշ չէ լրացուցիչ իրավական երաշխիքներով ԲԲՀՄ-ի կիրառման հատուկ վարույթի առկայությունը: Վերջինս նաև պայմանավորված է ռոմանոգերմանական իրավական համակարգում առանձնահատուկ դասական մինչդատական վարույթի բացակայությամբ: Այդ երկրներում գործն ընդհանուր հիմունքներով ուղարկվում է դատարան, որտեղ անցկացված դատաքննության արդյունքում անձի անմեղսունակության վիճակում հանցանքի կատարման փաստը հաստատվելու դեպքում վերջինս ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Իրենից հետաքրքրություն է ներկայացնում նաև անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքի ապացուցման բեռի բաշխման կանոնները դատավարության կողմերի միջև: Մասնավորապես, այդ երկրների գերակշիռ մասում, ելնելով քրեադատավարական մրցակցության սկզբունքից, անձի մեղսունակությունը բացառող հոգեկան հիվանդության առկայությունն ապացուցելու բեռը կրում է պաշտպանական կողմը:

Պատմականորեն ԱՄՆ-ում դեռևս 1895 թվականին Davis v. United States գործով Գերագույն դատարանի որոշմամբ՝ հիմնավոր կասկածից վեր չափանիշով անձի մեղսունակության հետ կապված հանգամանքների ապացուցման բեռն առավելապես դրված էր դատախազության վրա²⁰, սակայն հետագայում՝ 1952 թվականին Leland v. Oregon գործով Գերագույն դատարանը գտավ, որ պետությունը սահմանադրորեն կարող է մեղադրյալից պահանջել, հիմնավոր կասկածից վեր չափանիշով, ապացուցել իր անմեղսունակությունը²¹: Արդյունքում, 1984 թվականի՝ անմեղսունակության պաշտպանության բարեփոխման ակտի ընդունմամբ, անմեղսունակության ապացուցման բեռն ամբողջությամբ դրվեց պաշտպանական կողմի վրա²²: Գերագույն դատարանը United States v. Freeman գործով գտավ, որ նշված ակտում ապացուցման (ապացույցի) բեռի կարգավորումը համապատասխանում է ԱՄՆ Սահմանադրությանը՝ հղում կատարելով Leland-ի վերը հիշատակված գործով արտահայտված իրավական դիրքորոշմանը²³: Նշված ակտի ընդունումն արդյունք էր Ջոն Հինքլի (John Hinckley) վերաբերյալ գործի, ով անմեղսունակության պատճառով ստացել էր արդարացման վերդիկտ նախագահ Ռոնալդ Ռեյգանի սպանության փորձի կատարման համար: Այդ գործից հետո անմեղսունակության պատճառով արդարացման վեր-

դիկտի ստացման իրավական հնարավորություններն այնքան խստացան, որ հաճախ մեղադրյալները խուսափում են ընտրել այդ մարտավարությունը, քանի որ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ քրեական գործերի մոտ 1%-ի (մոտավորապես անմեղսունակության միջնորդությունների 1/4-ի) դեպքում են երդվյալ ատենակալները կայացնում արդարացման վերդիկտ՝ անմեղսունակության հիմքով²⁴։ Սակայն, մյուս կողմից, վերոնշյալ ակտի ընդունմամբ ապացուցման բեռի բաշխման նոր կարգավորումները հնարավորություն տվեցին կենսագործելու դասական մրցակցության սկզբունքը, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները զբաղվում են բացառապես անձի մեղադրանքը հիմնավորող ապացույցների ձեռքբերմամբ, իսկ քրեական պատասխանատվությունից

ազատվելու համար անմեղսունակության հիմնավորումը պաշտպանական հատուկ մարտավարություն է։

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ ԲԲՀՄ-ի կիրառման ռոմանոգերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերի հայեցակարգային առանձնահատկությունների ուսումնասիրությունը հիմք է ԲԲՀՄ-ի կիրառման հայրենական դատավարական մոդելը բարեփոխելու համար՝ հաշվի առնելով ինչպես գործող ԲԳՕ-ի առանձնահատկությունները, այնպես էլ՝ ԲԳՕ նախագծում ներդրված դատավարական նոր լուծումները։

¹ Տե՛ս, Петрова О.Г., Уголовно правовые отношения, М., ВЮЗИ, 1986, стр. 18.

² Տե՛ս, Смирнова М.Е., К вопросу о процессуальной природе судопроизводства о применении принудительных мер медицинского характера, Право и правосудие, Сибирский юридический вестник, 3(38) 2007, стр. 58.

³ Տե՛ս, Учебно-практический комментарий к Уголовному кодексу РФ / под общ. ред. Жалинского Э.А., М., 2005, стр. 268.

⁴ Տե՛ս, Додонов В.Н., Сравнительное уголовное право, Общая часть / под общ. ред. Щербы С.П., Юрлитинформ, М., 2009, стр. 345.

⁵ Տե՛ս, Վրաստանի քրեական օրենսգիրքը, որի 6-րդ բաժինն ուժը կորցրած է ճանաչվել 2007 թվականի հուլիսի 3-ի թիվ 5181 օրենքով, հասանելի է հետևյալ հղմամբ՝

https://www.legislationline.org/download/action/download/id/6341/file/Georgia_Criminal_Code_1999_am2016_en.pdf (22.01.2020):

⁶ Տե՛ս, Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին 2014 թվականի հուլիսի 26-ի թիվ 2539 օրենքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝

<https://info.parliament.ge/file/1/BillReviewContent/54190?> (22.01.2020), «Հոգեբուժական օգնության մասին»

օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2014 թվականի հուլիսի 26-ի թիվ 2530 օրենքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://info.parliament.ge/file/1/BillReviewContent/54188?> (22.01.2020), Վրաստանի քրեական

դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 3-րդ մասը և 191-րդ հոդվածի 2-րդ մասը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legislationline.org/download/action/download/id/6465/file/Georgia_CPC_2009_am2016_en.pdf (22.01.2020):

⁷ Տե՛ս, Горобцов В.И., Принудительные меры медицинского характера в отношении психически больных по Уголовному кодексу Российской Федерации: Учебное пособие, Красноярск: КВИШ МВД России, 1997, стр. 32:

⁸ Տե՛ս, Мищенко Е.В., Проблемы дифференциации и унификации уголовно-процессуальных форм производств по отдельным категориям уголовных дел, Оренбург, 2014, стр. 153.

⁹ Տե՛ս, նույն տեղում էջեր 199-200:

¹⁰ Տե՛ս, Handbook on European law relating to access to justice, European Union Agency for Fundamental Rights and Council of Europe, 2016, p. 70. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ S.C. v. the United Kingdom գործով 2004 թվականի հունիսի 15-ի վճիռը, զանգատ թիվ 60958/00,15, կետ 29-րդ, Quaranta v. Switzerland գործով 1991 թվականի մայիսի 24-ի վճիռը, զանգատ թիվ 12744/87 կետեր 32-36:

¹¹ Տե՛ս, Meftah and Others v. France [GC] գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռը, զանգատներ թիվ 32911/96, 35237/97 and 34595/97, կետ 47-րդ:

¹² Տե՛ս, Եվրոպական միության 2013 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 2013/C 378/02 հանձնարարականը՝ քրեական վարույթում կասկածվող կամ մեղադրվող խոցելի անձանց դատավարական երաշխիքների մասին:

¹³ Տե՛ս, Буфетова М.Ш., Производство о применении принудительных мер медицинского характера, Иркутск,

Российская государственная библиотека, 2004, стр. 130-131.

¹⁴ Տե՛ս, Vaudelle v. France գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2001 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 35683/97, կետ 65-րդ:

¹⁵ Տե՛ս, R.Rosner, Principles and practice of forensic psychiatry, second edition The United Kingdom, 2003, p. 7:

¹⁶ Տե՛ս, ՔԳՕ նախագծի 212-րդ հոդվածը:

¹⁷ Տե՛ս, Ա.Հովսեփյան, Ա.Թամազյան, Ա.Ղամբարյան, Վ.Շահնագարյան, Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները, Երևան, Աստղիկ, 2015, էջ 10:

¹⁸ Տե՛ս, արդարադատություն հասկացության մասին Ջ.Հայրապետյան, Դատավճռի որպես արդարադատության իրականացման ակտի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում, թեկնածուականատենախոսություն, Երևան, 2015, էջ 14:

¹⁹ Տե՛ս, A.Ashworth, L.Zedner, նշված աշխատությունը, էջեր 28-29:

²⁰ Տե՛ս, Davis v. United States, 160 U.S. 469, 16 S.Ct. 353, 40 L.Ed. 499 (1895):

²¹ Տե՛ս, Leland v. Oregon, 343 U.S. 790, 72 S.Ct. 1002, 96 L.Ed. 1302 (1952):

²² Տե՛ս, R.Simon, H.Ahn-Redding, The insanity defence, The world over, a division of Rowman & Littlefield Publishers, Inc., The United States of America, 2006, p. 37.

²³ Տե՛ս, United States v. Freeman, 804 F.2d 1574 (11th Cir. 1986):

²⁴ Տե՛ս, R.Rogers, D.Shuman, Fundamentals of forensic practice: Mental health and criminal law, The United States of America, Springer, 2005, p. 181.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա.Հովսեփյան, Ա.Թամազյան, Ա.Ղամբարյան, Վ.Շահնագարյան, Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները, Երևան, Աստղիկ, 2015:
2. Ջ.Հայրապետյան, Դատավճռի որպես արդարադատության իրականացման ակտի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում, թեկնածուականատենախոսություն, Երևան, 2015:
3. Додонов В.Н., Сравнительное уголовное право, Общая часть / под общ. ред. Щербы С.П., Юрлитинформ, М., 200.
4. Смирнова М.Е., К вопросу о процессуальной природе судопроизводства о применении принудительных мер медицинского характера, Право и правосудие, Сибирский юридический вестник, 3(38) 2007.
5. Горобцов В.И., Принудительные меры медицинского характера в отношении психически больных по Уголовному кодексу Российской Федерации: Учебное пособие, Красноярск: КВШ МВД России, 1997.
6. Мищенко Е.В., Проблемы дифференциации и унификации уголовно-процессуальных форм производств по отдельным категориям уголовных дел, Оренбург, 2014.
7. A.Ashworth, L.Zedner, Preventive Justice, The United Kingdom, Oxford university press, 2014.
8. Handbook on European law relating to access to justice, European Union Agency for Fundamental Rights and Council of Europe, 2016.
9. R.Rosner, Principles and practice of forensic psychiatry, second edition The United Kingdom, 2003.
10. R.Rogers, D.Shuman, Fundamentals of forensic practice: Mental health and criminal law, The United States of America, Springer, 2005.

Արնոլդ Վարդանյան

Главный специалист службы правовых экспертиз
Кассационного суда Республики Армения.
Аспирант кафедры уголовного судопроизводства
и криминалистики юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

*Концептуальные основы процедуры применения
принудительных мер медицинского характера*

В представленной статье обсуждаются концептуальные особенности процедуры применения принудительных мер медицинского характера с точки зрения романо-германской и англосаксонской правовых систем. Исходя из позиций, изложенных в статье, автор обосновывает необходимость реформирования процессуальной модели применения принудительных мер медицинского характера.

Ключевые слова: превентивная мера, принудительная мера медицинского характера, участие психолога, особое производство.

Arnold Vardanyan

Chief Specialist at the Service of Legal Expertises of the
Court of Cassation of the Republic of Armenia.
PhD Student at the Chair of Criminal Proceedings and
Criminalistics of YSU, Faculty of Law

SUMMARY

*Conceptual basis for the procedure of application
of medical enforced measures*

In the submitted article, the author discusses the conceptual peculiarities of the procedure of application of medical enforcement measures in terms of the Romano-Germanic and Anglo-Saxon legal systems. Based on the positions expressed in the article, the author provides justifications for the necessity to reform the procedural model of the procedure of the application of medical enforcement measures.

Key words: preventive measure, enforced medical measure, participation of a psychologist, special proceedings.

Բնագիրը ներկայացվել է 09.02.2020թ.

Ընդունվել է տպագրության 10.03.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Գիլբանդյանը

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքագիտության ամբիոնի 4-րդ կուրսի ուսանող

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում «ինքնության քաղաքականություն» հասկացությանը, որը հայալեզու գրականության մեջ գրեթե չի կիրառվում: Քաղաքական գիտության արևմտյան և ռուսալեզու կոնստրուկտիվիստական հարացույցի խոսույթում այն կարևոր տեղ է զբաղեցնում՝ հաճախ նույնացվելով «ազգակերտում» տերմինի հետ: Հաստատված է, որ ինքնության քաղաքականությունը կարևոր է Հայաստանի Հանրապետության համար՝ իբրև նրա ռազմավարական զարգացման բաղկացուցիչ արդի սոցիալ-քաղաքական ձևափոխումների համատեքստում, քաղաքական և քաղաքացիական գիտակցության զարգացման տեսանկյունից:

Հիմնաբառեր- ինքնության քաղաքականություն, ազգակերտում, ինքնություն, ինքնության ձևափոխում, ազգային ինքնություն, էթնիկ ինքնություն, քաղաքացիական ինքնություն:

Արդի հասարակական և հումանիտար գիտություններում հատուկ տեղ են զբաղեցնում ինքնության հայեցակարգային ուսումնասիրությունները: Այդ ուսումնասիրությունները գնալով թափ են առնում և տարածվում, ինչը վկայում է ինքնության հայեցակարգի տեսական մեծ պոտենցիալի, ինչպես նաև դրա միջգիտաճյուղային նշանակության մասին, որը թույլ է տալիս հասարակական երևույթները դիտարկել միաժամանակ տարբեր գիտաճյուղերի լույսի ներքո: Եթե սկզբում ինքնության հետազոտությունները մշակվում էին հիմնականում փիլիսոփայական և հոգեբանական հարթության վրա, ապա հետագայում տարածվեցին սոցիոլոգիական հետազոտություններում, իսկ այնտեղից՝ մնացած հասարակական գիտություններում:

Այսօր ինքնության հայեցակարգը մեծ տարածում է գտել նաև քաղաքական գիտություններում: Այս տեսական կառույցը թույլ է տալիս նորովի և յուրահատուկ ձևով նկարագրել ու բացատրել քաղաքական կյանքի տարբեր երևույթներ ու գործընթացներ: Պատահական չէ, որ գիտական հանրությունը մեծ ուշադրություն է դարձնում ինքնության հայեցակարգի տեսական-մեթոդաբանական հնարավորությունների վրա: Այսպես, ռուսաստանյան քաղաքագիտական հանրության մի ստվար գանգված մի քանի տարի շարունակ ուսումնասիրում էր ինքնության հայեցակարգի կիրառելիության սահմանները քաղաքագիտական հետազոտություններում՝ արդյունքում հրատարակվեց «Ինքնություն» հանրագիտարանային հրապարակումը:

Քաղաքական գիտությունների համատեքս-

տում առաջնային նշանակություն են ձեռք բերում հասարակական խմբերի (հանրույթների) տարբեր բնույթի ինքնությունների հարաբերակցության հիմնահարցերը: Խոսքը, առաջին հերթին, գնում է այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսիք են՝ ազգային ինքնություն, էթնիկ ինքնություն, քաղաքական ինքնություն, քաղաքացիական ինքնություն, քաղաքակրթական-մշակութային ինքնություն, դավանաբանական ինքնություն և այլն: Հատուկ ուշադրություն է դարձվում «ինքնության քաղաքականություն» հասկացությանը: Այս հասկացությունը առաջին պլան է մղվում հատկապես ավելի ու ավելի տարածվող կոնստրուկտիվիստական մոտեցման համատեքստում (Բ. Անդերսոն, Է. Գելներ, Է. Հոբսբաում, Ի. Սեմենենկո):

Հասարակական զարգացումը կոնստրուկտիվիստական որոշ հայեցակարգերում դիտարկվում է իբրև «նախագծերի» իրականացում: Հասարակական խավերը, շերտերը, ինչպես նաև ազգերն ու պետությունները դիտվում են իբրև ծավալվող նախագիծ: Արևմտյան հեղինակները, հենվելով հենց արևմտյան պատմական զարգացման փորձի վրա, գալիս են այն եզրակացության, որ «ազգը»՝ առաջին հերթին պետության կառուցողական գործունեության արդյունք է: Այդ իսկ պատճառով պնդում են, որ ոչ թե ազգն է կերտում պետությունը, այլ ընդհակառակը՝ պետությունն է կերտում ազգը: Այս գործընթացը այլ կերպ անվանում են՝ *ազգակերտման* (nation-building) գործընթաց:

Ազգակերտման գործընթացի հիմնական սուբյեկտը, ինչպես տեսնում ենք, պետությունն է, թեև

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

այս կամ այն չափով այդ գործընթացին կարող են մասնակցել նաև այլ սուբյեկտներ: Այս գործընթացը, մի կողմից, ազգային պետության զարգացման, իսկ մյուս կողմից, պետական ազգերի կայացման գործընթացն է:

Արևմտյան քաղաքագիտության մեջ, որպես կանոն, օգտագործում են հենց «ազգակերտում» տերմինը, իսկ ժամանակակից ռուսական քաղաքագիտական խոսույթում հակված են օգտագործել «*ինքնության քաղաքականություն*» հասկացությունը: Նշենք, որ այս հասկացությունը արևմտյան գրականության մեջ հիմնականում օգտագործվում է իբրև սոցիալական փոքրամասնությունների յուրահատուկ (ռասայական, էթնիկ, կրոնական, գենդերային) ինքնության լեգիտիմացմանն ուղղված պայքարը և քաղաքականությունը արտացոլող հասկացություն: Սակայն, ռուսաստանյան հեղինակները ինքնության քաղաքականությունը դիտարկում են նաև իբրև պետական քաղաքականություն՝ միտված ազգակերտմանը³: Ինչպես գրում է պրոֆեսոր Վ. Աչկասովը. «Ինքնության քաղաքականության հիմնական ակտորը ազգային պետությունն է, որը սոցիալականացման ինստիտուտների (կրթական համակարգ, զինծառայություն, ՉԼՍ) և հանրային քաղաքականության գործիքների միջոցով անընդհատ մասնակցում է «ազգակերտմանը»⁴:

Միաժամանակ, մենք համամիտ ենք այն կարծիքի հետ, որ. «Ինքնությունը արդի աշխարհում չի կարող կերտվել ինչ-որ մեկ ակտորով», քանի որ «հենց որ այդպիսի ակտորը (պետությունը կամ վերազգային ինստիտուտը) սկսում է հավակնել գերակայող դերի, դա հանգեցնում է բողոքի՝ ընդդեմ առաջարկվող ինքնության, իբրև արհեստական կառույցի»: Հետևաբար, անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության ինստիտուտների և պետության կոնսենսուս:

Կոնստրուկտիվիստական մոտեցումը բավականին հաջող նկարագրում և բացատրում է ոչ միայն արևմտյան ազգերի և պետությունների ձևավորումն ու զարգացումը, այլև այժմ ընթացող ազգակերտման որոշ գործընթացներ: Խոսքը, առաջին հերթին, «նոր ազգերի» կայացման մասին է՝ Ղազախստանում, Ուկրաինայում, Ադրբեջանում և այլն: Այստեղ, իրոք, պետությունը օգտագործում է իր ողջ հնարավորությունները, որպեսզի իր տարածքում բնակվող տարբեր էթնիկ, լեզվական, դավանաբանական խմբերին ձուլի մեկ «քաղաքական» ազգի մեջ: Իսկ ռուսաստանյան իրականությունում ինքնության քաղաքականությունը դիտվում է իբրև պետության հատուկ քաղաքականու-

թյուն՝ ուղղված բազմազգ կայսրությունում վերագալին «ռուսաստանյան քաղաքացիական ազգի» կերտմանը⁶:

Արևմտյան իրականությունում պետության կողմից իրականացվող ինքնության նման քաղաքականության քայլերը հիմնավորվում են հետմոդեռնիստական արժեհամակարգի համատեքստում հասարակության ատոմականացման գործընթացով, որը սպառնալիք է կոլեկտիվ ինքնությունների համար: Այս համատեքստում, օրինակ, մշակվեց բրիտանացի սոցիոլոգ Ջիզմունտ Բաումանի «անհատականացման հասարակության» հայեցակարգը, որտեղ հեղինակը պնդում է, որ տեղի է ունենում «հանրային շահի իմաստագրկում», «քաղաքացիության գաղափարի էրոզիա և հաջորդական դեգրադացում»⁷:

Ըստ արդի նորվեգացի քաղաքագետ և սոցիալական մարդաբան Իվեր Նոյմանի, ազգակերտման գործընթացներում, որպես կանոն, օգտագործվում է Ուրիշի կերպարը, նրան հակադրվելը՝ Ի. Նոյմանը բացահայտում է այս մեխանիզմի կիրառումը եվրոպական ինքնությունների կայացման գործընթացում: Այսօր ինքնության կերտման այս տեխնոլոգիան առատորեն կիրառվում է, օրինակ՝ հետխորհրդային տարածքում՝ Ուկրաինայում ռուսական ինքնությանը հակադրվելով, Ադրբեջանում՝ հայկական ինքնությանը և այլն: Այս դեպքերում նշված տեխնոլոգիան դրսևորվում է իր ծայրահեղ ձևերով, միստիֆիկացման և առասպելականացման միջոցով Ուրիշը ներկայանում է իբրև չարիքի մարմնավորում:

Ինչպես հայտնի է, սեփական արտաքին քաղաքականությունը լեգիտիմացնելու և ազգային ինքնության «մեսիական» բնույթը ամրապնդելու համար նման տեխնոլոգիան առատորեն կիրառում է նաև ԱՄՆ-ն: Մի կողմից՝ հակառակորդներին «սատանայականացնելու» հնարը, մյուս կողմից՝ սեփական պետության առաքելությունը չարիքի դեմ պայքարող հռչակելը, կազմում են ամերիկյան ռազմավարական մշակույթի կարևորագույն բաղկացուցիչները: Հայկական ինքնության կերտման գործընթացում նման տեխնոլոգիա նույնպես կիրառվել է, օրինակ՝ Վ դարում պարսից զավթողականությանը դիմակայելու պայմաններում: Չարագացման արդի փուլում այս երևույթը արտահայտվում է թուրքական ու ադրբեջանական ինքնությունների նկատմամբ, սակայն, բավականին մեղմ ձևով: Մեր կարծիքով, այսօր խիստ կարևոր է ունակ լինել առանձնացնել սեփական պատմության և հոգեկերտվածքի մեջ այն Ուրիշը, որը խոչընդոտում է զարգացմանը. առաջ ընթանալ՝ հակադրվե-

լով դրան: Խոսքը, նախ և առաջ, հայ ազգի իբրև գոհի ընկալման, իսկ ազգային պատմության՝ իբրև գոյատևման, ինչպես նաև, մեկուսացված, գետոյական կերպարի հաղթահարման մասին է:

Հայկական քաղաքագիտական գրականության մեջ «ինքնության քաղաքականություն» հասկացությունը գրեթե բացակայում է¹⁰: Ավելին, հայկական իրականության մասին խոսելիս և՛ գիտական, և՛ նույնիսկ հրապարակախոսական տիրույթում գրեթե չի օգտագործվում անգամ «ազգակերտում» հասկացությունը: Ընդ որում, խոսում են *պետականաշինության, բանակաշինության* և այլ կառուցողական գործընթացների մասին, սակայն, ոչ ազգակերտման: Դա, ըստ երևույթին, պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ, անհրաժեշտ է նշել, որ հայկական գիտական-հրապարակախոսական տիրույթում և նույնիսկ հոգեկերտվածքում ազգը, որպես հանրույթ, հնարավոր է նաև սեփական պետությունից դուրս և անկախ, ի տարբերություն արևմուտքի, որտեղ այն հնարավոր է միայն կայացած ազգային պետության պայմաններում: Փաստորեն, ազգը ընկալվում է ոչ այնքան իբրև քաղաքական, որքան քաղաքակրթական-մշակութային երևույթ: Բացի այդ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ժամանակակից Հայաստանի Հանրապետությունը միաէթնիկ է իր բնակչության կազմով: Եվ, քանի որ, ազգն էլ նույնացվում է էթնիկ միավորի հետ, ապա ինքնության հատուկ քաղաքականության անհրաժեշտություն պարզապես չի դիտարկվում:

Մենք չենք վիճարկում հայ ազգի էթնո-քաղաքակրթամշակութային բնույթը: Միաժամանակ, համարում ենք, որ նույնիսկ այդ պարագայում չի բացառվում կոնստրուկտիվիստական մեթոդաբանության կիրառումը: Ավելին, մենք համամիտ ենք այն տեսակետի հետ, որ հայ ազգի էթնո-մշակութային մոդելը, որը ձևավորվեց V-VII դարերում հենց նմանատիպ ինքնության քաղաքականության (կամ ազգակերտման քաղաքականության) արդյունք էր: Պարզապես այդ քաղաքականության հիմնական սուբյեկտը (ակտորը) ոչ թե պետությունն էր, որը հայերը կորցրեցին V դարի սկզբին, այլ՝ Հայ եկեղեցին, մշակութային վերնախավը, նախարարական տները:

Մեթոդաբանական ելակետի առումով մենք ընդունում ենք այն դրույթը, որ. «Ազգային ինքնությունը ոչ թե կարծրացած երևույթ է, այլ գտնվում է անընդհատ զարգացման մեջ, որը տեղի է ունենում կամ ինքնաբուխ և տարերայնորեն, կամ կրում է ծրագրային-ռազմավարական բնույթ»¹²: Իհարկե, պետք է հստակ տարանջատել ինքնության գուտ

արհեստական կերտման փորձերը ռազմավարական զարգացման քաղաքականությունից: Թե ինչ կոնկրետ խնդիրներ է լուծում ինքնության քաղաքականությունը, պայմանավորվում է տարաբնույթ գործոններով՝ բնակչության էթնիկ և դավանաբանական կազմով, սոցիալական բևեռացման աստիճանով, արտաքին սպառնալիքների առկայությամբ, աշխարհաքաղաքական տեղաշարժերով, քաղաքական մշակույթի մակարդակով և այլն: Այդ քաղաքականության համար խիստ կարևոր է նաև ապագայի տեսլականը, որին ձգտում են տվյալ պետությունը և հասարակությունը:

Ջարգացման արդի փուլում ինքնության քաղաքականությունը մեր իրականության մեջ ավելի է արդիականանում: Նախ, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը, փաստորեն, հավակնում է լինել ամբողջ հայության պետություն, իր վրա վերցնելով նաև հայկական Սփյուռքի պահպանման, Հայաստանի Հանրապետության հետ դրա ինտեգրման ապահովումը: 2007 թվականին ընդունված «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ արձանագրվում է. «Սփյուռքի ազգամշակութային ինքնության թուլացումը, Հայաստան-Սփյուռք կապի թուլացումը, փոխհարստացնող շփման բացակայությունը կարող են վտանգ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքների համար»¹³: 2019 թվականի օգոստոսի 27-ին կայացած ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների ամենամյա համաժողովի ժամանակ հռչակված ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական երեք սկզբունքներից մեկը՝ *համահայկականության* սկզբունքն է, որը ենթադրում է. «Հայկական դիվանագիտության կողմից Հայաստանի Հանրապետությունը, Արցախը և աշխարհասփյուռ հայությունը, որպես մեկ միասնական միավոր դիտարկելու անհրաժեշտությունը, դրանից բխող միասնական ազգային օրակարգով»¹⁴: Սակայն, ՀՀ ինքնության քաղաքականության այս շերտի ուսումնասիրությունն առանձին լայնածավալ հետազոտության խնդիր է և սույն հոդվածի շրջանակներում մենք դրան չենք անդրադառնա: Այստեղ մենք կփորձենք դիտարկել մեկ այլ շերտ՝ ինքնության քաղաքականության նշանակությունը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման և ազգային պետության կերտման տեսանկյունից:

Հարյուրամյակների ընթացքում սեփական պետության բացակայության պայմաններում գոր-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծառնում էր հայ ազգի մշակութային-դավանաբանական մոդելը: Այն թույլ էր տալիս պահպանել ազգային ինքնությունը և միասնությունը՝ նույնիսկ աշխարհասփյուռ վիճակում: Այն ժամանակ, երբ եվրոպական ժողովուրդները սկսեցին կերտել սեփական ազգային պետությունները, Հայաստանը ներառված էր արևելյան կայսրությունների մեջ՝ Օսմանյան Թուրքիա և Սեֆյան Պարսկաստան, որտեղ սկզբունքորեն հնարավոր չէր քաղաքացիական մշակույթի զարգացումը: Նույնիսկ Արևելյան Հայաստանի մի մասի ներառումը Ռուսական Կայսրության մեջ չփոխեց իրավիճակը: Պահպանվելով իբրև հայ՝ մշակութային-դավանաբանական առումով, հայերը այդպես էլ չդարձան քաղաքացիական ազգ: Խորհրդային Միությունը, որի մեջ ներառվեց հայության մի մասը 70 տարով, թեև որոշ առումով նպաստեց նրա քաղաքական գիտակցության զարգացմանը, սակայն, հիմնված լինելով վերազգային կոմունիստական գաղափարախոսության վրա, այս կայսրությունը նույնպես չէր կարող նպաստել ազգային-քաղաքացիական մշակույթի ձևավորմանը:

Գարաբաղյան շարժումը, հասարակական կյանքի ժողովրդավարացման պահանջները և անկախ պետականության վերականգնման ձգտումը 1988-1991 թվականներին, թվում էր՝ պետք է վերջապես նպաստեին սեփական ազգային պետության կայացմանը: Եվ իրոք, անկախության տարիներին բավականին ինտենսիվ աշխատանք տարվեց պետականաշինության առումով՝ ձևավորվեցին քաղաքական համակարգի ինստիտուտներ, կայացավ ու զարգացավ նորմատիվ դաշտը և այլն: Սակայն, մեր կարծիքով, քաղաքական համակարգի համակարգաստեղծ մի ենթահամակարգ՝ քաղաքական մշակույթը, կարծես թե զարգացման այս գործընթացում անտեսվեց: ԽՍՀՄ միակ բացարձականացված գաղափարախոսության մերժումը հանգեցրեց ամբողջական ապագաղափարախոսացման, ինչի արդյունքում՝ ձևավորվող ազգային պետության նոր գաղափարախոսական հիմքերը այդպես էլ չմշակվեցին:

Գաղափարախոսությունը, նախ և առաջ, հիմնարար արժեքների համակարգ է, որը հիմք է հանդիսանում ծրագրային զարգացման համար: Նման արժեքների բացակայությունը, այլ պատճառների հետ մեկտեղ, հանգեցրին նրան, որ այդպես էլ չմշակվեց ազգային երկարաժամկետ զարգացման ռազմավարական հայեցակարգ, որի բաղկացուցիչներից պետք է լինեին քաղաքացիական հասարակության զարգացման հայեցակարգը: Արդյունքում, զանգվածային քաղաքական գիտակցություն

ընդ զարգանում էր տարերայնորեն, ինչը դարձավ քաղաքացիական հասարակության կայացման կարևոր խոչընդոտներից:

Իշխման ավտորիտար ձևերի տարածման պայմաններում հասարակությունը սկսեց աստիճանաբար օտարվել սկզբից պետական իշխանությունից, հետագայում՝ նաև հանրային քաղաքականության այլ ինստիտուտներից, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններից: Արդյունքում՝ հասարակությունն սկսեց ինքնաբուխ կերպով ինքնակազմակերպվել, ինչի դրսևորումներն էին 2012-2018 թվականների հասարակական-քաղաքական շարժումները¹⁵:

Այս ամենն ակնհայտորեն ցույց է տալիս, որ պետությունն իր զարգացման ծրագրերում այդպես էլ չգիտակցեց, որ ազգակերտումը չի կարելի ըմբռնել զուտ էթնիկ միավորի զարգացման իմաստով, որ դա նաև քաղաքացիական հասարակության զարգացման գործընթաց է, ինչը, իր հերթին, պետականակերտման կարևորագույն բաղկացուցիչն է:

Միայն 2016 թվականի ապրիլյան պատերազմից հետո պետական իշխանությունը փորձ կատարեց մշակել զարգացման ռազմավարական նախագիծ, որը պարունակում էր ինքնության քաղաքականության որոշակի տարրեր: Խոսքը «Ազգ-բանակ» ծրագրի մասին է: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այն ուղղված էր արտաքին անվտանգության մարտահրավերներին, բայց ոչ քաղաքացիական հասարակության ներքին զարգացմանը: Այդ իսկ պատճառով միակողմանի բացարձականացվում էր բանակի՝ իբրև հետագա զարգացման առաջնային ինստիտուտի դերը, իսկ քաղաքացիական հասարակության ինստիտուտների նշանակությունն ընդհանրապես անտեսված էր, ինչը կարող էր հանգեցնել հասարակական կյանքի միլիտարիզացմանը: Նշենք նաև, որ սույն ծրագիրը դեկլարատիվ բնույթ ուներ և այդպես էլ նրա բովանդակությունը չբացվեց:

«Թավշյա հեղափոխությունից» հետո իշխանական նոր վերնախավը հռչակեց, որ Հայաստանի Հանրապետության և՛ ընդհանուր, և՛ հասարակական կյանքի առանձին ոլորտների զարգացումը պետք է կրի ռազմավարական բնույթ: Նոր իշխանությունները ձեռնամուխ եղան նոր ինստիտուցիոնալ և նորմատիվ փոփոխությունների: Մենք համարում ենք, որ ռազմավարական զարգացման կարևորագույն բաղկացուցիչը պետք է լինի նաև ինքնության քաղաքականությունը, որը պետք է կրի ծրագրային և համակարգված բնույթ:

Մեր կարծիքով, Հայաստանում առկա է

www.aradaradailyjournal.com

ինքնության որոշակի ճգնաժամ, որը արտահայտվում է հայության, մի կողմից, իբրև մշակութային-դավանաբանական ամբողջի, իսկ մյուս կողմից, իբրև «պետական ազգի» հարացույցերի բախման մեջ: Դա, նախ և առաջ, պայմանավորված է քաղաքական մշակույթի և քաղաքացիական գիտակցության զարգացման ցածր մակարդակով, ինչն առաջին հերթին խոչընդոտում է քաղաքական, սոցիալական ինստիտուտների արդյունավետ գործառնմանը: Հենց այս համատեքստում է արդիականանում Հայաստանի Հանրապետությունում ինքնության քաղաքականության անհրաժեշտությունը: Ովքեր չեն ընդունում նման քաղաքականության անհրաժեշտությունը, փաստարկելով, որ Հայաստանը միաէթնիկ պետություն է, փաստորեն, չեն իմաստավորում, որ դասական ազգային պետության պարագայում ազգային ինքնությունը չի հանգում էթնիկ ինքնությանը, այլ ենթադրում է պետական-քաղաքական և քաղաքացիական ինքնության շերտ: Այս համատեքստում մենք համաձայն ենք այն մտքի հետ, որ. «Ազգային ինքնությունը որոշում է մարդու պատկանելիությունը ազգին իբրև քաղաքական համակեցություն:»¹⁶ : Մենք համամիտ ենք այն կարծիքի հետ, որ մշակույթն է (իբրև արժեքների համակարգ) այն սուսինձը, որն ամրացնում է ցանկացած ինքնություն: Եթե քաղաքակրթական առումով այդ արժեքների կուռ համակարգը դարերի ընթացքում ասպահովել է հայ ազգի ինքնա-

տիպ ինքնությունը, ապա ազգային պետության կերտման ներկա փուլում առաջին պլան է մղվում քաղաքացիական մշակույթի արժեքների համակարգը: Այս համատեքստում մենք ընդունում ենք այն միտքը, որ արդի աշխարհում «հենց քաղաքացիական քաղաքական մշակույթն է ամրացնում ազգը, ասպահովելով նրան փրուզումից, երաշխավորում է նրա հաջորդական գոյությունը ժամանակի մեջ»¹⁷ :

Այսպիսով, ընդունելով, որ ազգակերտումը պետական շինարարության անբաժան մասն է և իրենից ներկայացնում է անընդհատ գործընթաց, համարում ենք, որ Հայաստանի Հանրապետության ռազմավարական զարգացման կարևորագույն բաղկացուցիչը պետք է լինի ինքնության քաղաքականությունը: Չարգացման ներկա փուլում այդ քաղաքականությունը, նախ և առաջ, պետք է միտված լինի քաղաքացիական ինքնության զարգացմանը՝ նպատակ ունենալով համադրել ազգային-մշակութային արժեքները քաղաքացիական արժեքների հետ: Այս գործընթացում առաջնային նշանակություն է ձեռք բերում քաղաքացիական սոցիալականացումը, ընդհանրապես, և քաղաքացիական կրթությունը, մասնավորապես:

¹ Идентичность: личность, общество, политика. Энциклопедическое издание / Отв. Ред. И.С. Семенов / ИМЭМО РАН. М.: Издательство «Весь мир», 2017.

² Ачкасов В.А. Этнополитология. М.: Издательство Юрайт, 2014. С. 102.

³ Семенов И.С. Политика идентичности // Идентичность: личность, общество, политика. Энциклопедическое издание / Отв. Ред. И.С. Семенов / ИМЭМО РАН. М.: Издательство «Весь мир», 2017. С. 648.

⁴ Ачкасов В.А. Проблемы политики национальной идентичности в современном мире // Проблемы национальной идентичности в контексте современной глобализации: материалы международной научной конференции 3-4 ноября 2017г. - Ер.: 2017. С. 24.

⁵ Политическая идентичность и политика идентичности. Т. 2: Идентичность и социально-политические изменения в XXI веке/ отв. Редактор И. С. Семенов. М.: РОССПЭН, 2012 С. 94.

⁶ Тишков В.А. Российский народ: книга для учителя. М., 2010. С. 6.

⁷ Бауман З. Индивидуализированное общество. М.: Логос, 2002.

⁸ Нойман И. Использование «Другого». Образы Востока в фромировании европейских идентичностей. М.: Новое издательство, 2004.

⁹ Иванов О. Американская стратегическая культура // Обозреватель-Observer. N 2, 2007. СС. 91-92.

¹⁰ Բաղադրությունն են կազմում Հ. Մարգարյանի որոշ հրատարակումներ: Саркисян О.Л. Армянская община России в контексте политики идентичности Российской Федерации и Республики Армения // Армяне юга России: история, культура, общее будущее: Материалы III Международной научной конференции (г. Ростов-на-Дону, 30-31 мая 2018г.

[отв. ред. акад. Г.Г. Матишов]. Ростов-на-Дону, Издательство ЮНЦ РАН, 2018. Саркисян О.Л. N 29 (N 2/2018).

¹¹ Саркисян О.Л. Армянская община России в контексте политики идентичности Российской Федерации и Республики Армения. С. 170.

¹² Саркисян О.Л. Некоторые постулаты исследования национальной идентичности в контексте современных социально-политических и культурно-цивилизационных трансформаций. // Вестник РАУ: гуманитарные и общественные науки. N 23 (N 2/2016). С. 43.

¹³ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն // <https://www.mfa.am/filemanager/Statics/Doctrinarm.pdf>

¹⁴ ԱԳ նախարար Չոհրաբ Մնացականյանի բացման խոսքը ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների ամենամյա համաժողովին // https://www.mfa.am/hy/speeches/2019/08/27/fm_opening_remarks/9782

¹⁵ Саргсян Д.О. Протестные движения в Армении в контексте трансформации гражданского сознания // Международная конференция студентов, аспирантов и молодых ученых “Ломоносов”: Сборник научных статей. – Ер.: Изд-во РАУ, 2019. С. 57.

¹⁶ Ачкасов В.А. Проблемы политики национальной идентичности в современном мире. С. 24.

¹⁷ Ачкасов В.А. Политика идентичности мультиэтнических государств в контексте решения проблемы безопасности. СПб.: Изд-во СПбГУ, 2012. С. 66.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն // <https://www.mfa.am/filemanager/Statics/Doctrinarm.pdf>
2. ԱԳ նախարար Չոհրաբ Մնացականյանի բացման խոսքը ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների ամենամյա համաժողովին // https://www.mfa.am/hy/speeches/2019/08/27/fm_opening_remarks/9782
3. Ачкасов В.А. Политика идентичности мультиэтнических государств в контексте решения проблемы безопасности. СПб.: Изд-во СПбГУ, 2012.
4. Ачкасов В.А. Проблемы политики национальной идентичности в современном мире // Проблемы национальной идентичности в контексте современной глобализации: материалы международной научной конференции 3-4 ноября 2017г. – Ер.: 2017.
5. Ачкасов В.А. Этнополитология. М.: Издательство Юрайт, 2014.
6. Бауман З. Индивидуализированное общество. М.: Логос, 2002.
7. Иванов О. Американская стратегическая культура // Обозреватель-Observer. N 2, 2007.
8. Идентичность: личность, общество, политика. Энциклопедическое издание / Отв. Ред. И.С. Семенов / ИМЭМО РАН. М.: Издательство «Весь мир», 2017.
9. Нойман И. Использование “Другого”. Образы Востока в формировании европейских идентичностей. М.: Новое издательство, 2004.
10. Политическая идентичность и политика идентичности. Т. 2: Идентичность и социально-политические изменения в XXI веке/ отв. Редактор И. С. Семенов. М.: РОССПЭН, 2012.
11. Саргсян Д.О. Протестные движения в Армении в контексте трансформации гражданского сознания // Международная конференция студентов, аспирантов и молодых ученых “Ломоносов”: Сборник научных статей. – Ер.: Изд-во РАУ, 2019.
12. Саркисян О.Л. Армянская община России в контексте политики идентичности Российской Федерации и Республики Армения. // Армяне юга России: история, культура, общее будущее: Материалы III Международной научной конференции (г. Ростов-на-Дону, 30-31 мая 2018 г. [отв. ред. акад. Г.Г. Матишов]. Ростов-на-Дону, Издательство ЮНЦ РАН, 2018.
13. Саркисян О.Л. Культурный ресурс политики идентичности (на примере Армении) // Вестник РАУ: гуманитарные и общественные науки N 29 (N 2/2018).
14. Саркисян О.Л. Некоторые постулаты исследования национальной идентичности в контексте современных социально-политических и культурно-цивилизационных трансформаций. // Вестник РАУ: гуманитарные и общественные науки. N 23 (N 2/2016).
15. Семенов И.С. Политика идентичности // Идентичность: личность, общество, политика. Энциклопедическое издание / Отв. Ред. И.С. Семенов / ИМЭМО РАН. М.: Издательство «Весь мир», 2017.
16. Тишков В.А. Российский народ: книга для учителя. М., 2010.

Դավիդ Սարգսյան

Ստուդենտ 4-րդ կուրսի քաղաքական գիտությունների
կադրերի քաղաքականության և քաղաքականության
ինստիտուտի իրավունքի և քաղաքականության ԲԱՄ

РЕЗЮМЕ

*Քաղաքականության քաղաքականության քաղաքականության
ինստիտուտի իրավունքի և քաղաքականության ԲԱՄ*

В данной статье автор обращается к понятию “политика идентичности”, которое в армяноязычной литературе почти не используется. В дискурсе западной и русскоязычной конструктивистской парадигмы политической науки этот термин занимает особое место, зачастую отождествляясь с термином нациестроительство. Постулируется, что политика идентичности важна для Республики Армения как составляющая ее стратегического развития в контексте современных социально-политических трансформаций, с точки зрения развития политического и гражданского сознания.

Ключевые слова: политика идентичности, нациестроительство, идентичность, трансформация идентичности, национальная идентичность, этническая идентичность, гражданская идентичность.

David Sargsyan

4th Year Student of the Chair Political science,
Institute of Law and Politics RAU

SUMMARY

Identity policy in the Republic of Armenia in the context of transformation of the national identity

In this article, the author refers to the concept of identity policy, which is almost never used in Armenian-language literature. In the discourse of Western and Russian-speaking constructivist paradigm of political science, this term occupies a special place, often identified with the term nation-building. It is postulated, that the policy of identity is important for the Republic of Armenia as a component of its strategic development in the context of modern socio-political transformations, from the point of view of the development of political and civil consciousness.

Key words: identity policy, nation-building, identity, identity transformation, national identity, ethnic identity, civil identity.

Բնագիրը ներկայացվել է 03.02.2020թ.

Ընդունվել է տպագրության 07.02.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է) քաղաքական գիտությունների թեկնածու, Ն.Ա. Դուրմազյանը

ԱՀԱՐՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տեղեկատվության անվտանգության և ծրագրային անվտանգության ամբիոնի 4-րդ կուրսի ուսանող

ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Սույն հոդվածում նկարագրվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունն արդարադատության համակարգում: Թվային գործիքների և ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումն արդարադատության համակարգում էապես ազդեցություն կարող է ունենալ համակարգի արդյունավետության բարձրացման, քիրախային գործողությունների իրականացման, պետական կառավարման համակարգի հաշվետվողականության և թափանցիկության գործընթացում: Համակարգված տվյալների պարբերական հավաքագրման անհրաժեշտությունը կարևոր է, առաջին հերթին, անչափահասների արդարադատության ոլորտում՝ որպես իրավախախտումների կանխարգելմանն ու արդյունավետ արձագանքմանն ուղղված ծրագրերի և քաղաքականությունների մշակման, իրագործման ու գնահատման գործիք:

Հիմնաբառեր - տվյալների հավաքագրում, տվյալների բազա, արդարադատության ցուցիչներ, էլեկտրոնային գործիք, տեղեկատվական համակարգ:

Դարեր շարունակ մարդկությունը կուտակել է գիտելիքներ և տեղեկություններ շրջապատող աշխարհի մասին, այլ կերպ ասած՝ հասարակությունը զարգացման տարբեր փուլերում մշտապես իր առջև խնդիր է դրել հավաքագրել շրջապատող աշխարհի, իրերի և երևույթների մասին տեղեկատվություն: Հասարակական փոփոխությունների զարգացմանն ընդառաջ՝ տրանսֆորմացվել և փոփոխվել են նաև տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և տվյալների կառավարման մեխանիզմները: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը թույլ տվեց տեղեկատվության հավաքագրումը, տեղափոխումը, կառավարումն իրականացնել առավել նորարար, արդյունավետ ու ավելի հուսալի կերպով: Այժմ հասարակության տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման և օգտագործման տեմպերը կտրուկ աճում են: Կա նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրում իրավական գործունեության ոլորտում: Եթե մենք ուղղակիորեն խոսում ենք իրավական գործունեության մասին, ապա նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ այն զգալիորեն ակտիվացել է: Տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն մի շարք առավելություններ և հնարավորություններ: Առաջին հերթին, դրանք հնարավորություն են ստեղծում համապարփակ պահեստավորել տարբեր աղբյուրներից մեծ քանակությամբ տեղեկատվություն, արագ որոնել


տվյալների հսկայական զանգվածներում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նույնիսկ բեկորների և ցանկացած հեռավորության վրա կապի միջոցով արագ տեղեկատվություն փոխանցել [1]:

Իրավաբանական, ինչպես շատ այլ տեսակի գործունեության մեջ, հսկայական դեր է խաղում տեղեկատվության փոխանցման, ստացման, պահպանման, մշակման եղանակների կատարելագործումը և աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Ավելին, իրավական պրակտիկայում ծագող առաջադրանքների բացառիկ բազմազանությունը թույլ է տալիս օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների ողջ տեսականին (սովորական տեքստային խմբագիրներից մինչև ավտոմատացված տեղեկատվական համակարգեր և «խորհրդատու համակարգեր», որոնք կարող են սինթեզել, որոշակի չափանիշների ներդրումից հետո): Ներկայումս տեխնիկական աջակցությունը մեծ դեր ունի իրավական համակարգի տվյալների հավաքման և մշակման գործում: Տեխնիկական աջակցությունը տեխնիկական միջոցների համալիր է՝ նախատեսված տեղեկատվական համակարգի գործունեության և տեխնոլոգիական գործընթացների համար [1]: Տեխնիկական աջակցությունը մաս է կազմում տեղեկատվական համակարգերի: Տեղեկատվական համակարգի ընդհանուր կառուցվածքը կարող է կազմել ենթահամակարգերի մի շարք՝ անկախ օգտագործման ոլորտից: Այս դեպքում դրան բնորոշ են դասա-

www.aradadutyjournal.com

կարգման կառուցվածքային առանձնահատկություններ, որոնք էլ իրենց հերթին ունեն աջակցող ենթահամակարգեր: Այսպիսով, ցանկացած տեղե-

կատվական համակարգի կառուցվածքը կարող է ներկայացվել հետևյալ աջակցող ենթահամակարգերի միջոցով (Նկար 1):



Նկար 1. Տեղեկատվական համակարգի կառուցվածքը

Հատկանշական է, որ տեղեկատվական գործիքների ներդրումն առանձնակի կարևորվում է նաև արդարադատության համակարգում: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարությունն իր կառուցվածքում առանձնացնում է Ռազմավարական պլանավորման և էլեկտրոնային արդարադատության վարչությունը [2], որը մշակում և իրականացնում է ծրագրեր արդարադատության ոլորտում՝ ժամանակակից, ինովացիոն, այլընտրանքային լուծումների միջոցով, արդարադատության և պետական ծառայությունների մատուցման ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով: Մյուս կողմից, էլեկտրոնային արդարադատության (էլեկտրոնային/թվային գործիքների ներդրումը) զարգացումը բխում է նաև ՀՀ կառավարության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության, դրա իրականացման, 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրից[3]:

Սույն հոդվածում մեկ օրինակով ներկայացվում է տեղեկատվական գործիքների կիրառմամբ էլեկտրոնային արդարադատության զարգացման մոդելը: Համակարգված տվյալների պարբերական հավաքագրման անհրաժեշտությունը կարևոր է, առաջին հերթին, անչափահասների արդարադատության ոլորտում՝ որպես իրավախախտումների կանխարգելմանն ու արդյունավետ արձագանքմանն ուղղված ծրագրերի և քաղաքականությունների մշակման, իրագործման, գնահատման գոր-

ծիք: Անչափահասների համար էլեկտրոնային գործիքների ներդրումը թիրախային է՝ նաև անչափահասների կողմից տեղեկատվական գործիքների կիրառման տարածվածությամբ: Անչափահասների արդարադատության համակարգի վերաբերյալ համապարփակ, օբյեկտիվ պատկերացում կազմելու համար պետք է տեսանելի լինի, թե ինչպես են շատ անչափահասներ «մտնում» համակարգ, և ինչ է պատահում նրանց հետ քրեական արդարադատության հաջորդող փուլերում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է առանձնացնել այն հստակ չափանիշները, որոնք հիմք են հանդիսանալու էլեկտրոնային գործիքի առանձին բնութագրիչների հստակեցման համար: Չափանիշների հիման վրա տեղեկատվական օբյեկտների խմբավորումը մեծապես հեշտացնում է տեղեկատվության որոնումն ու ընտրությունը:

Անչափահասների արդարադատության համակարգի զարգացման միտումները գնահատելու և օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա, տուժող երեխաների վերաբերյալ համապարփակ և պարբերական տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտությունից ելնելով՝ 2015 թվականին ՍԱԿ-ի[4] մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող «Երեխաների համար արդարադատության մատչելիությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում ներգրավված միջազգային և ազգային փորձագետների կողմից ուսում-

նասիրվել և վերլուծվել են անչափահասների արդարադատության թվային ցուցիչները:

ՄԱԿ-ի Հանցավորության և թմրամիջոցների գրասենյակը, տարբեր այլ ինստիտուտներ, ինչպես նաև իրավական ակտեր հորդորում են ունենալ անչափահասների արդարադատության հնարավորինս գործուն ցուցիչներ: Միջազգային փորձագետի կողմից անչափահասների արդարադատության ցուցանիշների վերաբերյալ ներկայացվել և առաջարկվել են դիտարկումներ, որի արդյունքում՝ ազգային փորձագետների կողմից լրամաշկվել և ներկայացվել են թվով 25 ցուցիչներ: Այս ցուցիչներն ու տեղեկատվության հավաքագրումը կօգնեն որոշում կայացնողներին լինել առավել հասցեական ու անաչառ իրենց որոշումներում, կնպաստեն արդյունավետ քաղաքականության մշակմանը, ինչպես նաև, ներգրավելով գիտական ու ակադեմիական ոլորտի մասնագետների, կբարելավվի անչափահասների արդարադատության ոլորտն ընդհանուր առմամբ: Վերլուծելով դաշտում առկա խնդիրները՝ փորձագետների կողմից փորձ է արվել մշակել Հայաստանի Հանրապետությունում անչափահասների արդարադատության հնարավորինս կիրառելի ցուցիչներ, որոնցով հնարավոր կլինի նախագծել և ներդնել անչափահասների վերաբերյալ տվյալների միասնական շտեմարան: Անչափահասների արդարադատության ցուցիչներն առաջարկվել են տվյալների միասնական բանկի համար: Տվյալների բազան հավաքագրում ու համախմբում է ընտրված ցուցիչների տվյալները, որոնք հավաքագրվել են քրեական արդարադատության մարմինների կողմից, ինչպիսիք են՝ ոստիկանությունը, քննչական մարմինները, դատախազությունը, դատարանները, քրեակատարողական ծառայությունը և պրոբացիոն ծառայությունը: Ժամանակ առ ժամանակ այս միասնական ազգային տվյալների բանկի կողմից հավաքագրված տվյալները կարող են տրամադրվել նաև անդրազգային տվյալների բանկերին, ինչպիսին է օրինակ՝ «Սոցիալական արդարության ավելի արդյունավետ ապահովման համար փոխակերպվող մոնիթորինգի տարածքային տվյալների բանկը» (TransMonEE)[5]:

Ցուցիչների հավաքագրման հիմնական աղբյուրներից մեկը ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից մշակված ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի 11 քանակական ցուցիչներն են.

1. Օրենքի հետ խնդիր ունեցող երեխաներ (սահմանվում է որպես «ձերբակալված երեխաներ»),

2. Անազատության մեջ գտնվող երեխաներ,
3. Նախնական կալանքի տակ գտնվող երեխաներ,
4. Նախնական կալանքի տևողություն,
5. Ազատազրկման տևողություն (ներառյալ ձերբակալման ժամանակահատվածը),
6. Ազատազրկման ընթացքում երեխաների մահացության դեպքեր,
7. Մեծահասակներից անջատ պահվել,
8. Ծնողների և ընտանիքի հետ կապ,
9. Ազատազրկման դատապարտում,
10. Մինչդատական փուլում արտադատական լուծում (diversion),
11. Հետազոտման խնամք[6]:

Վերը ներկայացված ցուցիչներն անչափահասների արդարադատության միակ միջազգային ցուցիչները չեն: Դրանցից է նաև «Սոցիալական արդարության ավելի արդյունավետ ապահովման համար փոխակերպվող մոնիթորինգի տարածքային տվյալների բանկը» (TransMonEE): Սա ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից 1992 թվականին ստեղծված տարածքային տվյալների բազան է, որի նպատակն է մշտադիտարկել սոցիալ-տնտեսական փոփոխությունները նախկին Սովետական Միության երկրներում և Արևելյան Եվրոպայում: Այն ներկայումս օգտագործում է մոտ 400 ցուցիչ՝ ներառյալ 9 ցուցիչ «Անչափահասների արդարադատությունը և հանցանքները» բաժնում: Այս ցուցիչներն են՝

1. Գրանցված հանցագործությունների տոկոսը,
2. Տարվա ընթացքում երեխաների նկատմամբ իրականացված հանցագործությունները,
3. Տարվա ընթացքում ոստիկանության հետ առնչություն ունեցած անչափահասները,
4. Տարվա ընթացքում ձերբակալված անչափահասների թիվը,
5. Տարվա ընթացքում մեղադրանք հարուցված անչափահասների թիվը,
6. Տարվա ընթացքում նախնական կալանքի տակ վերցված անչափահասները,
7. Տարվա ընթացքում քրեական վարույթում ընդգրկված անչափահասները,
8. Տարվա ընթացքում անչափահասների դատապարտումները,
9. Տարվա վերջում կալանավորված անչափահասները[7]:

Բոլոր այս ցուցիչները բաղդատվում են ըստ տարիքի, սեռի և այլ գործոնների, որոնք տարբեր են ըստ տարբեր ցուցիչների: Դրանցից երկուսը հատկանշական են: Կատարված հանցագործությունների տոկոսի վերաբերյալ տվյալները, ինչ-

պես և կարելի էր սպասել, պետք է մանրամասնեցվեն, որպեսզի հնարավոր լինի արձանագրել անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը: Իսկ քրեական վարույթում ընդգրկված անչափահասների վերաբերյալ տվյալները բաղդատվում, մանրամասնվում են, որպեսզի տարբերակված մոտեցում լինի իրավախախտում կատարած և որպես վկա ընդգրկված անչափահասների միջև: Այսպիսով, սույն ցուցիչների հիմնական նպատակն է ազգային իրավասու մարմիններին մշտապես տրամադրել տվյալներ, որոնք օգտակար կլինեն անչափահասներին վերաբերող իրա-

վապահ և/կամ արդարադատության համակարգի գործունեությունը վերահսկելու և այլ իրավասու ազգային մարմինների, կառույցների և խմբերի կողմից իրագործվելիք ինտեգրացված ազգային քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործում:

Ստորև ներկայացվում են Հայաստանում անչափահասների արդարադատության վերաբերյալ TransMonEE-ի հրատարակած ամենավերջին տվյալները 2013 թվականի դրությամբ: Տվյալները տրամադրվել են 109 ցուցիչներից 6-ի համար (Նկար 2):

	անչափահասների կողմից գրանցված հանցանքները	418
1	անչափահասների դեմ հանցանքների թիվը	359
2	նստիկանության հետ առնչություն ունեցող անչափահասները	-
3	ձերբակալված անչափահասները	352
4	անչափահասները, ում նկատմամբ հարուցվել է քրեական գործ	112
5	կալանավորված անչափահասները	-
6	քրեական վարույթում գտնվող անչափահասները	-
7	դատապարտված անչափահասները	87
8	ազատազրկման դատապարտված անչափահասները	76
9	ազատազրկված անչափահասները, տարվա վերջում	23
10	բանտում գտնվող անչափահասներ	11

Նկար 2. TransMonEE-ի հրատարակած տվյալները

Այսպիսով, անչափահասների արդարադատության ցուցանիշների այս օրինակը արդարադատության համակարգում կարող է դիտարկվել որպես թվային գործիքների ներդրման նմուշ մեծածավալ տվյալների հավաքագրման, կառավարման և փոխանցման գործընթացում: Հարկ է ընդգծել, որ այս ցուցանիշների թվային ներդրման անհրաժեշտությունը բխում է, առաջին հերթին, միջազգային պարտավորություններից, ինչպես նաև էլեկտրոնային արդարադատության զարգացման միտումներից:

Ունենալով անչափահասների տվյալների հավաքագրման նման սեփական տվյալների բազա, որը կլրացվի քրեական արդարադատության մարմինների կողմից, ինչպիսիք են՝ նստիկանությունը, քննչական մարմինները, դատախազությունը, դատարանները, քրեակատարողական ծառայությունը և պրոբացիոն ծառայությունը, ըստ անհրաժեշտության՝ հնարավորություն է ստեղծվում ցանկա-

ցած պահի տեղեկություն ձեռքբերել նշված ցուցիչների մասին, ինչպես նաև՝ համակարգի կողմից ավտոմատ կերպով ստանալ տվյալների մշակման հիմքում կայացված որոշում (օրինակ՝ թե որ մարգում, քաղաքում կամ գյուղում է գերակշռում հանցագործությունների քանակը): Նման տվյալների բազա ունենալով՝ հնարավոր է նաև խուսափել ֆինանսական կորստից, տնտեսելով այն գումարները, որոնք ծախսվում են տվյալների փոխանցման համար՝ կրճատելով փոստային ծառայությունների ծախսը մինչև 8-10%: Տվյալների բազայի օբյեկտների խմբավորման հիման վրա հնարավոր է որոշել անչափահասների խմբի մոտ կատարած հանցագործությունների քանակը, օրինակ՝ պայմանավորված նրանց կրթական, ընտանեկան և սոցիալական գործոններով: Տվյալների նման բազան թույլ կտա նաև տեղեկություններ ունենալ հանցագործության, դրա կատարման վայրի, կատարման ժամանակի, կատարող անձի կամ անձանց մասին[5]:

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Սա մարտահրավեր է ինչպես արդարադատության համակարգի, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչների համար՝ նպաստելու համագործակցությամբ թվային տեխնոլոգիաների ներդրմամբ առանձին ոլորտների զարգացմանը, սակայն ակնհայտ է, որ համատեղ գործունեությունը կհանգեցնի այն առա-

ջընթացին, որն անհրաժեշտ է անչափահասների արդարադատության համակարգի հզորացման, անչափահասների հանցավորության նվազեցման և անվտանգ միջավայր ստեղծելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Համակարգչային գիտության ուսուցիչ և ՏՀՏ տառադարձում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները ժամանակակից տարրական դպրոցում <https://passportbdd.ru/hy/windows/uchitel-informatiki-i-ikt-rasshifrovka-informacionno-kommunikacionnye/>, հասանելի է 11.03.2020 դրությամբ:
2. ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածք, <http://moj.am/structures/view/structure/38>, հասանելի է 11.03.2020 դրությամբ:
3. ՀՀ կառավարության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարություն, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/12/19-1717.pdf, հասանելի է 11.03.2020 դրությամբ:
4. Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ): <https://www.un.org/en/about-un/>, հասանելի է 11.03.2020 դրությամբ:
5. Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում երեխաների և կանանց իրավիճակի մոնիտորինգ: <http://transmonee.org/>, հասանելի է 11.03.2020 դրությամբ:
6. Անդամ-պետությունների կողմից ներկայացվելիք նախնական հաշվետվությունների վերաբերյալ վերանայված ուղեցույցեր՝ համաձայն Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ երեխաների իրավունքների կոնվենցիայի կամընտիր արձանագրության 1-ին գլխի 12-րդ հոդված, 2006թ., ՄԱԿ-ի փաստ. CRC/C/OPSC/2
7. Եվրոպայի Խորհրդի փաստ. T-ES (2013) 02

Աարոն Րուսանյան

Студент 4-го курса кафедры информационных и телекоммуникационных технологий института электроники и безопасности программного обеспечения Национального Политехнического Университета Армении, Студент 4-го курса

РЕЗЮМЕ

Внедрение цифровых инструментов в области ювенальной юстиции

В данной статье описывается внедрение информационных технологий в систему правосудия. Внедрение цифровых инструментов и инноваций в систему правосудия может оказать существенное влияние на повышение эффективности системы, осуществление целенаправленных действий, отчетность и прозрачность системы государственного управления. Необходимость в систематическом сборе данных важна, прежде всего, в области правосудия в отношении несовершеннолетних как инструмента разработки, реализации и оценки программ и политики, направленных на предупреждение и пресечение правонарушений.

Ключевые слова - сбор данных, база данных, показатели правосудия, электронный инструмент, информационная система.

Aharon Rushanyan

4th year student of the Department of Information and Telecommunication Technologies of the Institute of Electronics and Software Security of National Polytechnic University of Armenia

SUMMARY

Introduction of digital tools in the field of juvenile justice

This article describes the introduction of information technologies into the justice system. The introduction of digital tools and innovations in the justice system can have a significant impact on enhancing the efficiency of the system, implementing targeted actions, public administration system accountability and transparency. The need for systematic data collection is important first and foremost in the field of juvenile justice as a tool for developing, implementing and evaluating programs and policies aimed at preventing and responding to crimes.

Key words - data collection, database, equity indicators, electronic tool, information system.

Բնագիրը ներկայացվել է 09.03.2020թ.

Ընդունվել է տպագրության 11.03.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Թումասյանը

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածում ներկայացվել է կադրային քաղաքականության խնդիրը, որը ռազմավարական նշանակություն ունի ՀՀ հանրային (պետական) կառավարման համակարգում: Կադրային ներուժի զարգացման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից իրավական դաշտը զգալիորեն բարելավվել է, սակայն այն լիարժեք չի արտացոլում համակարգում գործող կադրային կառուցակարգերը: Կադրային մեխանիզմի իրավական կարգավորման հիմքերի ուսումնասիրությունը կարող է արդյունավետ կերպով օգտագործվել վերոնշյալ մեխանիզմը լավացնելու, համակարգային և ինստիտուցիոնալ առկա խնդիրները լուծելու, արդյունավետությունը բարձրացնելու միջոցներ և գործողություններ սահմանելու համար:

Սույն հոդվածում ուսումնասիրվող թեմայի նորույթն է՝ ուսումնասիրել և վերլուծել ՀՀ հանրային ծառայության համակարգում կադրային բարեփոխումների առանձնահատկությունները, գործող օրենսդրությունը՝ համակարգի արդյունավետության բարձրացման հնարավորությունները ներկայացնելով: Ներկայացվում են նաև համակարգում տեղ գտած նոր փոփոխությունները, թերություններն ու առավելությունները. արվում են համապատասխան առաջարկություններ:

Հիմնաբառեր - կադրային քաղաքականություն, պետական ծառայություն, հանրային կառավարում, իրավական կարգավորում, պետական պաշտոն, քաղաքացիական ծառայություն, արժանիքահեն համակարգ, պետական ապարատ:

Հայաստանի Հանրապետությունում կադրային քաղաքականության իրավական կարգավորումն՝ որպես պետական կառավարման համակարգ կազմող մարմինների գործունեությունը վերահսկող կարևորագույն կառուցակարգ, ամրագրված ու երաշխավորված է Սահմանադրությամբ¹: Միաժամանակ, Սահմանադրությամբ հռչակվող այդ իրավական հարաբերությունները կարգավորվում են օրենքով, ինչն իրավական պետությանը բնորոշ հատկանիշ է: Նշենք, որ կադրային քաղաքականության կարգավորման իրավական հիմքերը հասկանալու համար՝ անհրաժեշտ է հաշվի առնել հանրային կառավարման բարեփոխումների ընթացքը, ծանոթանալ օրենսդրական իրավակարգավորումներին: Էականորեն կարևորվում է պետական կադրային քաղաքականության սուբյեկտի՝ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց ընտրության և/կամ նշանակման կարգը, իրավասություններն ու պարտականությունները, որոնք սահմանվում են նաև Ազգային ժողովի (ԱԺ) և Կառավարության որոշումներով, Նախագահի հրամանագրերով, պետական մարմինների իրավական այլ ակտերով²: Թեև պետական կադրային քաղաքականությունն ունի իրավական կարգավորման հստակ ձևաչափ, սակայն հանրային (պետական) ծառայության համակարգում առկա են բա-

զում թերություններ, որոնք ազդում են ինչպես համակարգի, այնպես էլ՝ առանձին ինստիտուտների գործառույթների համակարգված իրականացման և արդյունավետության վրա: Այդ թերությունները վերհանելու նպատակով՝ քննարկենք նախևառաջ կադրային քաղաքականության էությունը հանրային ծառայության համակարգի շրջանակներում՝ հաշվի առնելով հանրային կառավարման բարեփոխումների ընթացքը ՀՀ-ում:

Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ գործուն կադրային քաղաքականություն և կառավարման հատուկ ապարատ: Այդ տրամաբանությամբ գործող կադրային քաղաքականության անհրաժեշտությունը զգացվել է դեռևս հին ժամանակներում: Վերջինիս ձևավորման իրավական հիմքերը կարելի է տեսնել Համուրաբիի օրենքներում, Արիստոտելի, Պլատոնի և շատ այլոց աշխատություններում: Կադրային քաղաքականության ձևավորման և իրականացման սկզբունքների էվոլյուցիան, որպես վարչաիրավական ինստիտուտ, այնուամենայնիվ, պայմանավորել է պետական ծառայությունը³: Պետական ծառայությունը հանրային ծառայության համակարգի բաղադրիչ է (ենթահամակարգ), որը միասնական հիմքով գործում է մյուս ենթահամակարգերի հետ ընդհանուր կադրային քաղաքականության

հայեցակարգի շրջանակներում⁴: Ներկայումս պետական կադրային քաղաքականությունը մշակվում է անհատի, հասարակության ու պետության շահերի կշռադատման հիման վրա և իրականացվում է հանրային ծառայության միջոցով: Ինչ վերաբերում է հանրային ծառայության համակարգին, ապա այն ամբողջ աշխարհում իրականացվում է հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումն ապահովող կառուցակարգերով, արժանիքային ու ներկայացուցչական լինելու սկզբունքներով: Այս տեսակետից հատկանշական է, որ հանրային ծառայության միասնական կանոնների թելադրման միջոցով հնարավոր է հանրային կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության ամրապնդումն ու կատարելագործումը:

Նպատակային կադրային քաղաքականություն իրականացնելու համար վերոնշյալ պայմանները, միևնույն ժամանակ, բավարար չեն և անհրաժեշտ է լրացնել այն իրավագիտակցության բարձր արժեքանությամբ ու ռազմավարությամբ⁵: Առանձնակի կարևորվում է ռազմավարական ծրագրի մշակումը, քանի որ կադրային քաղաքականության երկարաժամկետ պլանավորման միջոցով ստեղծվում է տեսլական, սահմանվում են ռազմավարական ուղղությունները: Սակայն, հաշվի առնելով, որ կադրային քաղաքականությունը դինամիկ երևույթ է, անհրաժեշտ բարեփոխումներ կատարելու համար վերոգրյալի համատեքստում նախատեսվում է նաև կարճաժամկետ պլանավորում: Հաստատված համոզմունք է, որ թվարկված բոլոր պայմաններով է հնարավոր լուծել հանրային ծառայության բոլոր ենթահամակարգերում մասնագիտական զբաղվածության, որակյալ կադրերով համալրման, սերնդափոխության պլանավորման, ինչպես նաև հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի հակազդման, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդրման և շատ այլ խնդիրներ: Այս առումով, հանրային ծառայության արդի համակարգով սահմանվում է, որ գիտելիքահեն և պատշաճ իրավական կարգավորում ունեցող կադրային քաղաքականությունը պետության, պետականության ամրապնդման և հասարակության քաղաքակրթական համաժամանակյա զարգացման երաշխիքն է: Պետության կողմից հանրային կառավարման համակարգում կադրային քաղաքականությանն ուղղված օրենսդրական դաշտի վերանայումն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցումը լուրջ քայլ էր երկրում ժողովրդավարական արժեքների հաստատման ու ինստի-

տուցիոնալ համակարգի կերտման ճանապարհին:

ՀՀ-ում հանրային կառավարման համակարգը ձևավորվել է մոտ երեք տասնամյակ առաջ և այսօր ունի բավականին խրթին կառուցվածք: Հանրային ծառայության համակարգում հանդիպող ենթահամակարգերի բազմազանությունն ու խճճված վարչարարությունն, այլ գործոնների հետ մեկտեղ, կոռուպցիոն երևույթների առաջացման պատճառ են դառնում: Մասնավորապես՝ հանրային ծառայության ենթահամակարգերում պաշտոնների խմբերի ու ենթախմբերի դասակարգումը լիարժեք համակարգված չէ, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հանրային ծառայության տարբեր տեսակներով ու իրավական հիմքերով: Երկար տարիներ գտնվելով խորհրդային պետական կառավարման համակարգի ազդեցության ներքո՝ կադրային քաղաքականությունը հետխորհրդային Հայաստանում շարունակել է իրականացվել այդ համակարգի իներցիայով: Կուսակցական պաշտոնեության իշխանության ողջ ընթացքում հանրային ծառայությունը, մեծ հաշվով, եղել է «անիմաստ» ինստիտուտ: Անկախությունից հետո, Ա.Ադայանի մեջբերմամբ, երբ պետական ծառայությունը դիտարկվել է՝ նյութական բարեկեցությունը լավացնելու զբաղմունք, համակարգը ձևավորվել է սոցիալական կապերի և միջանձնային հարաբերությունների հաստատման սկզբունքով⁶: Այս և մի շարք իրողություններ փաստում են, որ կադրային քաղաքականության խորհրդային մեխանիզմը պահպանվել է նաև հանրային կառավարման հայեցակարգի, ռազմավարության, անհրաժեշտ իրավական և օրենսդրական հիմքերի բացակայության պատճառով: Ի տարբերություն հետխորհրդային մյուս պետությունների (նկատի ունենք Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի), որտեղ 1990-ականներին արդեն զարգանում էր հանրային կառավարման հայեցակարգն ու ներդրվել էր հանրային ծառայության ինստիտուտը, ՀՀ պետական կառավարման համակարգում նույնիսկ սահմանված չէին հանրային ծառայության մակարդակները, բացակայում էին իրավական և օրենսդրական անհրաժեշտ հիմքերը: Հանրային ծառայության հայեցակարգով պետական կառավարման համակարգի և ինստիտուտների կերպափոխմանը չէր նպաստում նաև 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ հռչակված նախագահական կառավարման ձևը: Սահմանադրությունը նախագահին լայն լիազորություններ էր տալիս պետական, քաղաքական և քաղաքացիական պաշտոններում նշանակումներ կատարելու համար: Ապակենտրոն պետա-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան ծառայության համակարգ ձևավորելու հնարավորությունը սահմանափակված էր նաև այն հանգամանքով, որ պետական և քաղաքական պաշտոնների նշանակման կարգը, նրանց լիազորություններն ու պարտականությունները սահմանվում էին պետական կառավարման մարմինների կանոնադրություններով⁸։ Ուսումնասիրելով պետական կառավարման մարմիններում ծառայության իրավական ու օրենսդրական կարգավորումներն ու կանոնադրությունները՝ կարող ենք նշել, որ հայեցողության սկզբունքով՝ կադրային մեխանիզմների գերակշռումը, ծառայողական սկզբունքների և չափանիշների անհատակությունը հանգեցրել են պետական կառավարման համակարգի և քաղաքական իշխանության սերտաճմանը։

Պետական ծառայության և կառավարման համակարգի արդիականացման ուղղությամբ ՀՀ պետական քաղաքականությունն իրականացվել է՝ լավագույն փորձը ներդնելու և այն հայկական իրականությանը հարմարեցնելու ուղեգծով։ Նշենք, որ այդ գործընթացը հասկանալու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սահմանադրական բարեփոխումների ընթացքը։ Դեռ 2000-ականների սկզբին քննարկվող սահմանադրական փոփոխություններով նախատեսվում էր նախագահի լիազորությունների մի մասի դեկլացում պետական այլ մարմիններին, մասնավորապես՝ ԱԺ-ին։ 2005 թվականի նոյեմբերի 27-ի Սահմանադրական փոփոխություններով հռչակվում էր ՀՀ քաղաքացիների օրենքով սահմանված ընդհանուր հիմքունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունքը, իսկ հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում էին օրենքով։ Պետական կառավարման համակարգի վերակառուցման այս փուլում ԱԺ-ի կողմից ընդունվեցին «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» օրենքներն ու Հանրապետության նախագահի մի շարք հրամանագրեր¹⁰։ Օրենսդրական և սահմանադրական փոփոխությունների արդյունքում, առաջին անգամ, սահմանվեց «հանրային ծառայություն» հասկացությունը։ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի սահմանման համաձայն՝ հանրային ծառայությունն ընդգրկում էր պետական և տեղական կառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիական աշխատանքը։ Չնայած

սահմանումից երևում է, որ «հանրային» եզրույթն ավելի լայն իմաստ ունի, քան «քաղաքացիական» առանձին օրենք չընդունվեց, իսկ քաղաքացիական ծառայությունը սահմանվեց՝ որպես հանրային ծառայության այլ տեսակներին զուգահեռ գործող ծառայության տեսակ։ Ենթադրվում է, որ քաղաքացիական ծառայության օրենքի ներդրումը կառավարման համակարգ նպաստելու էր պետական մարմիններն ապակենտրոնացնելուն և ապաքաղաքականացնելուն, առավել համակարգված դարձնելուն, սակայն գործնականում դա տեղի չունեցավ։ Ի թիվս այլ պատճառների, նրան չհաջողվեց դա իրագործել՝ պետական ծառայության տարբեր տեսակները կարգավորվող օրենսդրության, կադրային որոշումների ընդունման փակ կառուցակարգերի, համակարգային այլ խնդիրներով պայմանավորված։ Այդ մասին են փաստում օրինակ՝ պետական ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքներով¹¹ նախատեսվող մրցույթի և արտամրցույթի միջոցով իրականացվող կադրային նշանակումների մասին դրույթները, թեկնածուների մրցութային ընթացակարգերի ոչ թափանցիկ լինելը, պաշտոնի անձնագրերի փոփոխման կարգը (քաղաքական դեմքերի կողմից), կոռուպցիոն վտանգները։

Պետական ծառայության նոր կառուցվածքներ և հաստիքներ սահմանելու լայն լիազորություններ ունեին նաև վարչապետն ու կառավարությունը¹²։ Այսպես, պետական կառավարման ենթահամակարգերը վարել են բավական ինքնուրույն կադրային քաղաքականություն, որը պաշտոնական օղակների համոզմամբ՝ պայմանավորված է եղել պետական գործունեության ոլորտի բազմազանությամբ ու առանձնահատկություններով։ Կարևորելով պետական կառավարման համակարգի մարմինների համակարգված, արհեստավարժ և բարեվարքության նորմերով աշխատելու առաջնահերթությունը՝ կարծում ենք, որ նպատակային կադրային քաղաքականություն վարելը չի բացառվում, հաշվի առնելով, որ այդ առանձնահատկությունները, ենթադրում են հանրային ծառայության արդի հայեցակարգով համակարգային մասնատվածությունը, ինչպես նաև «թռիչքային» կարիերայի արատավոր փորձը վերացնելու անհրաժեշտությունը։ Իսկ պետական կադրային քաղաքականության վարումն այդպիսի հայեցակարգի բացակայության պայմաններում՝ ՀՀ-ում նպաստել է պետական կառավարման համակարգի կենտրոնացմանն ու քաղաքական պաշտոնների ազդեցությունը մեծացնելուն։ Այդ հանգամանքը փաստող ևս մի օրինակ էր 2003 թվականին կոալիցիոն կառավար-

րության ձևավորման հետևանքով փոխնախարարի նշանակման կարգի ազատականացումը¹³ : Ընդհանրացնելով հարկ ենք համարում նշել, որ պետական ծառայության հաստիքների մեծ մասի նշանակման կարգն իրականացվել է քաղաքական ուժերի հարաբերակցության սկզբունքով, ինչը թեև չի հակասում միջազգային պրակտիկային, սակայն թափանցիկ ընթացակարգերի և պաշտոնին ներկայացվող չափանիշների անհստակության պատճառով հիմնավորված չի եղել: Ավելին, ըստ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ քաղաքական սուբյեկտների կողմից են նշանակվել նաև բարձրաստիճան քաղաքացիական ծառայողները, ինչն ուղղակիորեն ցույց է տալիս նրանց վրա քաղաքական ազդեցության առկայությունը :

Վերադառնալով քաղաքացիական ծառայության միջոցով պետական կառավարման համակարգը արդիականացնելու խնդրին և այն կանխադրյալին, որը չհանգեցրեց ակնկալվող արդյունքներին՝ հարկ է նշել նաև հանրային ծառայության համակարգի կառուցվածքային անհամապատասխանությունը միջազգային փորձի հետ: Ինչպես արդեն նշվել է պետության գործառույթների իրականացման վերաբերյալ, անհրաժեշտ էր ունենալ գործուն պետական ապարատ, որը փաստացի մինչև 2011 թվականը լիարժեք իրավական կարգավորում չի ունեցել, քանի որ քաղաքականությունն ու կառավարումը լիարժեք տարանջատված չեն եղել: Երկնակարգակ պետական ապարատը, որը կազմված է *կառավարչական* (public administration) և *քաղաքական դեկավարման* (public policy) կառուցվածքային մասերից, ՀՀ-ում ձևավորվել է 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Այդ օրենքով հստակ սահմանվեցին պետական ապարատի առաջնային կառուցվածքային միավորները, որպիսիք են հանրային ծառայության պաշտոնները¹⁴ : Կատարված օրենսդրական բարեփոխումների արդյունքում սահմանվեցին ընտրովի և նշանակովի (քաղաքական, հայեցողական, քաղաքացիական) և մրցույթով (արտամրցույթով) պաշտոն զբաղեցնողների ենթախմբերը: Երկրորդ խմբի (կառավարչական) պաշտոնյաներին կամ ծառայողներին ընտրելու և/կամ նշանակելու ընթացակարգերը շարունակվում էին կարգավորվել «ՀՀ քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով և իրավական ակտերով, իսկ առաջինի (քաղաքական դեկավարման) դեպքում՝ գերակայող մնաց քաղաքական ուժերի հարաբերակցությամբ կադրային քաղաքականություն իրականացնելու մեխանիզմը: Այդ մե-

խանիզմի իրավական կարգավորման ոչ համակարգային, ոչ միասնական լինելու հետևանքով պետական և քաղաքական բարձր պաշտոններում նշանակման կարգը շարունակեց քաղաքականացվել, իսկ դրա մի հատված ընդհանրապես մնաց իրավական որևէ կարգավորումից դուրս (օրինակ՝ խորհրդականի պաշտոնը): Հաշվի առնելով հանրային ծառայության օրենսդրական կարգավորումների տրամաբանությունը՝ կարելի է հետևություն անել, որ կադրային քաղաքականության իրական մեխանիզմները լիարժեք չեն գործել: Այդուհանդերձ, ՀՀ հանրային կառավարման համակարգում իրավահարաբերությունների կարգավորման և կադրային քաղաքականության նոր կառուցակարգերի կիրարկման համար ընդունված, «Հանրային ծառայության մասին» օրենքը ճանաչվեց, հետագա ընդունվելիք իրավական ակտերի ու օրենքների համար, որպես մայր օրենք:

Հանրային ծառայության իրավական կարգավորման բարեփոխումների հաջորդ փուլը սկսվեց 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով: Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման անցնելով՝ պետական կառավարման համակարգում կամ պետական մարմիններում ծառայության բովանդակային փոփոխություններ անելու նպատակ չի եղել: Հիմնավորման համար բավական է անդրադառնալ 2011 և 2018 թվականների հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրության համեմատական ուսումնասիրությանը: Քանի որ պետական ծառայությունը հանրային ծառայության քաղադրիչների համակարգում մշտապես ուրույն տեղ է ունեցել, ապա այդ մասով կարող ենք նշել, որ ըստ նոր օրենսդրական փոփոխությունների հանրային պաշտոնների պետական տեսակի հաստիքացուցակը որոշակիորեն համակարգվել է: Այսպես օրինակ, եթե 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով պետական ծառայության տեսակներ են սահմանվել ՀՀ ԱԺ աշխատակազմում, Ազգային անվտանգության խորհրդում, ՀՀ քննչական կոմիտեում, դիվանագիտական, հատուկ ծառայություններում, ապա 2018 թվականին փոփոխված նույն օրենքով այդ շարքը համալրվել է դատական, քաղաքական, մաքսային, հարկային, փրկարար, զինվորական, ոստիկանական մարմիններում և ծառայություններում¹⁶ : Նույն օրենսդրական փոփոխություններով պետական քաղաքական պաշտոններ են համարվում՝ Հանրապետության նախագահի, ԱԺ պատգամավորների, փոխվարչապետերի, ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների ու փոխնախարարների

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պաշտոնները: Էսկանորեն կարևորվում է փոխնախարարների նշանակման կարգի սահմանումը, որոնք 2011 թվականի օրենքով, նշանակվում էին հայեցողական սկզբունքով¹⁷: Փոխնախարարներին ներառելով պետական քաղաքական պաշտոնների շարքում, կարծում ենք՝ հաստիքը լիարժեք քաղաքականացվեց: Հայեցողական պաշտոնների մյուս հատվածը, օրինակ՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, վարչապետի աշխատակազմի ղեկավարի և նրանց տեղակալների, մարզպետների պաշտոնները դասակարգվեցին վարչական պաշտոնների (նշանակովի և միևնույն ժամանակ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կախված) շարքում¹⁸: Հիմնվելով վերոգրյալի վրա՝ կարող ենք նշել, որ հանրային պաշտոնների կառուցվածքային նոր դասակարգումը ընդլայնել է քաղաքական պաշտոնների ցանկը, ինչը, միգուցե, այդ պաշտոններին նշանակվելու կառուցակարգերով տեղավորվում է խորհրդարանական կառավարման տրամաբանության մեջ, սակայն, միևնույն ժամանակ, դրանք լիարժեք իրավական կարգավորում չունեն: Ասվածը վերաբերում է ընդհանրապես քաղաքական դեմքերի կողմից նշանակվող պաշտոնների ընդլայնմանը, և, մասնավորապես, վարչական և հայեցողական պաշտոնների համալրմանը: Ըստ այդմ, կարծում ենք, որ հանրային ծառայության իրավական և օրենսդրական այն փոփոխությունները, որոնք հաստատվեցին 2018 թվականի մարտի 23-ին, համակարգը քաղաքականացնելու միտում ունեին, հետևաբար, դրանք ազդել են նաև հանրային ծառայողի քաղաքական զսպվածություն պահպանելու սկզբունքի վրա: Մի կարևոր դիտարկում ևս՝ պետական քաղաքական պաշտոնների բաժանումը երկու նոր ենթատեսակների նպատակ ունենալով՝ նվազեցնել քաղաքացիական ծառայության ինստիտուտի դերը պետական կառավարման համակարգում, ինչը միգուցե, օբյեկտիվ հիմքեր ունեն, եթե հաշվի առնենք այդ ինստիտուտի մեթոդական աշխատանքի թերությունները: Սակայն, մույնիսկ այդ դեպքում, նման միտումը ուղղակի հակասում է հանրային ծառայության արդի հայեցակարգին: Այդ հայեցակարգին հակասող ևս մի դրույթ է պարունակում՝ պետական վարչական պաշտոնների նշանակման կարգով նախատեսվող քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում կադրային փոփոխություններ կատարելու կառուցակարգը¹⁹: Ինչպես ցույց տվեց սույն ուսումնասիրությունը, հանրային ծառայության և պետական կառավարման համակարգի արդիականա-

ցումն ու արդյունավետությունն ուղղակիորեն առնչվում է հանրային ծառայության տեսակների կադրային ներուժի կազմակերպչական, ինստիտուցիոնալ և իրավական կարգավորումներին, որոնք միասին ապահովում են պետական կառավարման համակարգի պահանջներին համապատասխանող ծառայողների հավաքագրումն ու համալրումը: Պետական կադրային քաղաքականության գնահատման տեսանկյունից՝ կարևոր ենք համարում պետական կառավարման ձևի փոփոխությամբ պայմանավորված հանրային ծառայության կառուցվածքային փոփոխությունները, որոնցով վերանայվել է ՀՀ հանրային ծառայության համակարգը:

Հատկանշական է, որ հանրային ծառայության համակարգը հիմնվում և գործում է ոչ միայն կառուցվածքի, այլ նաև *սկզբունքների* վրա: Կառուցվածքային փոփոխությունների հետ մեկտեղ, խորհրդարանական կառավարման անցնելիս Հայաստանի Հանրապետությունում իրավական ամրագրում են ստացել հանրային ծառայության նոր սկզբունքներ, կատարվել են պաշտոնական չափանիշների փոփոխություններ: 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով բարեփոխվել են՝ կադրային քաղաքականության կառուցակարգերն ինստիտուցիոնալացնելու եղանակները և կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն տարրեր հանդիսացող անհամատեղելիության պահանջների, պաշտոնների նշանակման և/կամ ընտրության չափանիշների, շահերի բախման, բարեվարքության և այլ սահմանափակումների կառուցակարգերը:

Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայող ձևավորելու տեսանկյունից կարևորում ենք հանրային ծառայության համակարգում կադրային քաղաքականության իրականացման սկզբունքների և չափանիշների հստակեցումը՝ հատկապես քաղաքական և պետական բարձր պաշտոններ համալրելիս: Այսպես, օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանրային ծառայության հիմնական սկզբունքների շարքում, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-33-րդ հոդվածներով, ներդրվել է «*արժանիքահեն կարիերային առաջընթացի վրա հիմնված հանրային ծառայության կայունության*» սկզբունքը (12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), բարեվարքության համակարգը: Վերջինը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները, նրանց անհամատեղելիության պահանջները, այլ սահմա-

նափակումներ և շահերի բախում:

Հանրային ծառայության պետական պաշտոնների զբաղեցման համար ներկայացվող չափանիշների շարքում՝ որպես պարտադիր պայման, ամրագրվել է բարձրագույն կրթությունը, աշխատանքային ստաժը և այլն: Ավելին, հանրային ծառայության համակարգում թափանցիկ, արդյունավետ և իրավական կառուցակարգերի ներդրման, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման նպատակով մշակվել և ընդունվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը²⁰: Վերջինում առաջարկվել են կոռուպցիայի կանխարգելման գործում իրական հանրային վերահսկողություն ապահովել պետության առաջին դեմքերի, հանրային ծառայության մեջ գտնվող բոլոր անձանց, նրանց ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների գործունեության և ունեցվածքի նկատմամբ: Ծրագրով առանձնապես կարևորվում է այնպիսի համակարգի ներդրումը, որը կերաշխավորի պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամների ունեցվածքի վերաբերյալ տեղեկատվության անխոչընդոտ հասանելիությունը: Կարևորելով այս գործնական քայլը՝ հարկավոր է նշել, որ նույնատիպ քայլեր անելու անհրաժեշտություն կա նաև պետական ապարատի միջին և ստորին օղակներում: Դրանցում կոռուպցիոն մեխանիզմների կանխարգելմանն ուղղված իրավական կարգավորման քայլ կարելի է համարել օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ՀՀ կառավարության սահմանած ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը²¹: Այդուհանդերձ, պետական ապարատի միջին և ստորին օղակների գործունեության թափանցիկությունն ու արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից նշվածը բավարար չէ:

Ամփոփելով կադրային քաղաքականության համակարգային խնդիրները՝ կարող ենք ևս մեկ անգամ ընդգծել, որ պետական կադրային քաղաքականության բարեփոխումները պետք է լինեն շարունակական: Հանրային ծառայության հիմքում անհրաժեշտ է դնել կադրային քաղաքականության ռազմավարական պլանավորումը, որը հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների ընթացքում հաշվի չի առնվել: Հանրային ծառայության համակարգում կադրային քաղաքականության իրավական հիմքերի ուսումնասիրությունը փաստում է, որ քաղաքականությունն ու կառավարումը պետք է տարանջատվեն: Գործող իրավական և օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն

ապահովում այդ տարանջատումը: Հարկավոր է տարանջատել պետության այդ երկու գործառնությունները, և կադրերի համալրման կառուցակարգերի միջոցով հստակ սահմանել փոխգործակցության մասշտաբը:

Եթե հաշվի առնենք, որ հանրային ծառայության մի շարք պաշտոններում ընտրության և նշանակման սկզբունքներն ու ընթացակարգերը սահմանվել են ներքին կանոնադրություններով, բազմաբնույթ իրավական ակտերով և օրենքներով, ապա հանրային ծառայության շրջանակներում իրականացվող կադրային քաղաքականությունը բավականին ապակենտրոնացված է: Կառավարման արդյունավետության տեսանկյունից կարևոր ենք համարում միասնական և նպատակային կադրային քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը կարևորվում է հատկապես պետական ծառայության քաղաքիչի դեպքում: Այսպիսով, հանրային ծառայության տեսակների բովանդակային լուրջ փոփոխություններ են անհրաժեշտ, քանի որ միայն կառուցվածքային ձևափոխումները բավական չեն նպատակային կադրային քաղաքականություն իրականացնելու համար: Հանրային ծառայության ինստիտուտը լրացուցիչ իրավական կարգավորումների կարիք ունի և դրանց հրատապությունը պայմանավորված է երկրում առկա հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ: Օրակարգային են՝ հանրային ծառայության բոլոր տեսակների արդիականացումը, «կադրային սովը» հաղթահարելուն միտված քաղաքականության մշակումն ու գործարկումը: Անհրաժեշտ է մշակել պետական կառավարման համակարգում կադրային քաղաքականության արդյունավետ իրականացման ռազմավարական ծրագիր, որը պետք է հիմք հանդիսանա, հատկապես, հանրային ծառայության միջին և ստորին օղակների կադրային քաղաքականության վերանայման համար՝ սկսած պետական կառավարման համակարգից, վերջացրած ոչ պետական կառույցներով:

www.ardaradatumjournal.com

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 49-րդ, 159-րդ հոդվածներ:

² Տե՛ս, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքը, ընդ. 2018 թվականի մարտի 23-ին, «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկության նախագծի մասին 2019 թվականի մարտի 21-ի թիվ 256-Լ ՀՀ կառավարության որոշում, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 651-Ա ՀՀ կառավարության որոշում:

³ Տե՛ս, Александрова Н.А., Брюхова О.Ю. Основы кадровой политики и кадрового планирования, Изд. УрГУПС, Екатеринбург, 2014, стр. 7:

⁴ Տե՛ս, Եզեկյան Ա.Ռ. Հանրային ծառայության զարգացման արդի հիմնախնդիրները, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երևան, 2017, էջ 80-84:

⁵ Տե՛ս, Farazmand A. Strategic Public Personnel Administration: Building and Managing Human Capital for the 21st Century, Volume 1, London, 2006, pp. 3-5.

⁶ Տե՛ս, Աղայան Ա. Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները, «Նորավանք», Երևան, 2002, էջ 27:

⁷ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, 1995 թ., 55-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ կետեր:

⁸ Տե՛ս, ՀՀ կառավարության 1993 թվականի ապրիլի 26-ին «Հայաստանի Հանրապետության կառավարության գործերի կառավարչության ժամանակավոր կանոնադրությունը», Հայաստանի Հանրապետության արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության վարչության կանոնադրություն, հաստատված ՀՀ վարչապետի 1996 թ. հունվարի 10-ի N 8 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչության կանոնադրություն, հաստատված ՀՀ վարչապետի 1996թ. հունվարի 24-ի N 22 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կանոնադրություն, հաստատված 1997 թ. ապրիլի 9-ի N 130 որոշմամբ:

⁹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը փոփոխություններով 2005 թվականի նոյեմբերի 27, 30,2-րդ հոդված:

¹⁰ Տե՛ս, «Պետական կառավարչական հիմնարկի մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2001թ. հոկտեմբերի 23-ին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2001թ. հոկտեմբերի 23-ին, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2001թ. դեկտեմբերի 4-ին, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2002թ. հուլիսի 3-ին, ՀՀ նախագահի 2002թ. մարտի 16-ի «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» թիվ ՆՀ 1063 հրամանագիրը:

¹¹ Տե՛ս, «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2001թ. հոկտեմբերի 24-ին, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 2007թ. նոյեմբերի 28-ին, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2002թ. հուլիսի 3-ին:

¹² Տե՛ս, ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի «2002թ. ապրիլի 30-ի թիվ 488 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 1470-Ն որոշումը:

¹³ Տե՛ս, Խուդավերդյան Ա. Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում, Մարվարդ հրատ., Երևան, 2008թ., էջ 83:

¹⁴ Տե՛ս, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, ընդունված 2001թ. դեկտեմբերի 4-ին:

¹⁵ Տե՛ս, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2011թ. մայիսի 26-ին:

¹⁶ Տե՛ս, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ընդ. 2018թ. մարտի 23-ին:

¹⁷ Տե՛ս, նույն տեղում, 4-րդ հոդված:

¹⁸ Տե՛ս, նույն տեղում, 6-րդ հոդվածի 2-րդ մաս:

¹⁹ Տե՛ս, նույն տեղում 6-րդ հոդվածի 2-րդ մաս:

²⁰ Տե՛ս, Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում:

²¹ Տե՛ս, Կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 792-Ն որոշում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թվականի, 2005 թվականի փոփոխություններով):
2. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք:
3. «Պետական կառավարչական հիմնարկի մասին» ՀՀ օրենք:
4. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք:
6. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք:

7. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք:
8. «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենք:
9. «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք:
10. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք:
11. «Հանրային ծառայության մասին» օրենք:
12. «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկության նախագծի մասին 2019 թվականի մարտի 21-ի թիվ 256-Լ ՀՀ կառավարության որոշում:
13. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 651-Ա ՀՀ կառավարության որոշում:
14. Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում:
15. Կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 792-Ն որոշում:
16. ՀՀ կառավարության 1993 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործերի կառավարչության ժամանակավոր կանոնադրությունը»:
17. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության մեջ աշխատանքների անվտանգ կատարման և լեռնային հսկողության վարչության կանոնադրություն, հաստատված ՀՀ վարչապետի 1996 թ. հունվարի 10-ի N 8 որոշմամբ:
18. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչության կանոնադրություն, հաստատված է ՀՀ վարչապետի 1996թ. հունվարի 24-ի N 22 որոշմամբ:
19. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության կանոնադրություն, հաստատված 1997 թ. ապրիլի 9-ի N 130 որոշմամբ:
20. ՀՀ նախագահի 2002թ. մարտի 16-ի «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» թիվ ՆՀ 1063 հրամանագիրը:
21. ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի «2002թ. ապրիլի 30-ի թվով 488 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 1470-Ն որոշումը:
22. Խուդավերդյան Ա. Հանրային ոլորտի կառավարման բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում, Սարվարդ հրատ., Երևան, 2008թ.:
23. Александрова Н.А., Брюхова О.Ю. Основы кадровой политики и кадрового планирования, Изд. УрГУПС, Екатеринбург, 2014.
24. Եզեկյան Ա.Ռ. Հանրային ծառայության զարգացման արդի հիմնախնդիրները, ՀՀ պետական կառավարման սկադեմիա, Երևան, 2017:
25. Farazmand A. Strategic Public Personnel Administration: Building and Managing Human Capital for the 21th Century, Volume 1, London, 2006.
26. Աղայան Ա. Հայաստանի քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները, «Նորավանք», Երևան, 2002:

Կատրինա Ալտունյան

Ассистент кафедры государственного управления ЕГУ,
кандидат политических наук

РЕЗЮМЕ

Правовое регулирование кадровой политики в системе государственной службы РА

В данной статье рассматривается вопрос кадровой политики, имеющий стратегическое значение в системе государственного управления Республики Армения. Правовая база была значительно улучшена с точки зрения повышения эффективности развития кадровых ресурсов, но она не в полной мере отражает кадровые механизмы действующие в системе государственной службы. Изучение основ правового регулирования кадровых механизмов может эффективно использоваться для решения существующих системных и институциональных проблем, определения мер и действий по повышению эффективности государственной службы.

Ключевые слова – кадровая политика, государственная служба, государственное управление, правовое регулирование, государственный пост, гражданская служба, система заслуг, государственный аппарат.

Katerina Altunyan

Assistant at the Chair of Public Administration, YSU
PhD in Political Science

SUMMARY

Legal Regulation of Personnel Policy in the Public Service System of RA

The article presents the issue of personnel policy, which is of strategic importance in the public (state) administration system of the Republic of Armenia. The legal framework has been significantly improved in terms of enhancing the efficiency of human resources development, but it does not fully reflect the personnel policy's mechanisms in the public administration system. An examination of the basics of the legal regulation of the personnel policy can be effectively used to address existing systemic and institutional problems, to identify measures and actions to increase efficiency.

Key words - personnel policy, public service, public administration, legal regulation, public officer, civil service, merit-based system, state apparatus.

Բնագիրը ներկայացվել է 09.03.2020թ.

Ընդունվել է տպագրության 13.03.2020թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Մանուկյանը

JUSTICE
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

